Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ

Կազմվել է
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից

18 սեպտեմբերի 2024թ.

Բովանդակություն

1. Ներածություն 3
1.1. Ընկերության համառոտ նկարագիրը 3
1.2. Ուղենիշները և կայուն զարգացման առանցքը 3
1.3. Մեր ռազմավարությունը 5
1.4. Ռազմավարական ներդրումներ 9
1.5. Ռազմավարության հիմքում բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքները դնելը 16
1.6. Կայուն զարգացումը «Թիմ» ընկերության շրջանակներում 17
1.6.1. Կայուն զարգացման սկզբունքով կառավարում 19
2. Պարտատոմսերի թողարկման հիմնավորումը 22
3. Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը 23
3.1. Հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) ընտրություն 23
3.2. Կայուն զարգացման կատարողականի թիրախային ցուցանիշների կամ Թիրախների (ԿԶԿԹՑ) սահմանում 29
3.3. Պարտատոմսերի բնութագրերը 32
3.4. Հաշվետվողականությունը 33
4. Ստուգումները 34
4.1.1. Անկախ գնահատողի կարծիքը 34
4.1.2. Տարեկան ստուգումները 34
Հապավումների ցանկ 36

1. Ներածություն

1.1. Ընկերության համառոտ նկարագիրը

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ «Թիմ Տելեկոմ Արմենիա» (Team Telecom Armenia)) Հայաստանում առաջին կապի և հեռահաղորդակցության օպերատորի իրավահաջորդն է, որն ունի ավելի քան 100 տարվա պատմություն: Ներկայումս գործող կապի օպերատորի ժառանգած հարուստ փորձի և նորագույն տեխնոլոգիաների համադրության շնորհիվ՝ ընկերությունն իր բաժանորդներին մատուցում է փորձի և նորարարության համադրման արդյունքում մշակված ծառայությունները:

Թիմ Տելեկոմ Արմենիան հեռահաղորդակցության առաջատար օպերատոր է, որի եկամուտը 2023 թվականին կազմել է 34 միլիարդ դրամ, իսկ ՀՀ տարածքում աշխատակիցների թիվը՝ 1900: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր բաժանորդների թիվը կազմել է 1.3 միլիոն, որոնց թվում՝ 1 միլիոն բջջային և 300 հազար ֆիքսված կապի բաժանորդ:

Ընկերությունը տրամադրում է 2G (GSM), 3G (UMTS) և 4G (LTE) բջջային ծառայություններ, ֆիքսված հեռախոսակապի, թվային հեռուստատեսության ծառայություններ (IPTV և OTT), ինչպես նաև՝ ֆիքսված ինտերնետի հասանելիություն FTTH, FTTB, VDSL և ADSL տեխնոլոգիաների միջոցով:[1] 2021 թվականին մենք ձեռնամուխ ենք եղել տարածաշրջանում եզակի՝ Ապագա սերնդի ցանցի (NGN) կառուցմանը: 25G-PON տեխնոլոգիայի միջոցով աշխատող, 25 Գբ/վ ուշագրավ արագությամբ այս ցանցը համարվում է հեռահաղորդակցության ապագան:

1.2. Ուղենիշները և կայուն զարգացման առանցքը

2020 թվականի հոկտեմբերին «Թիմ» ՓԲԸ-ն ձեռք է բերել «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսերը: 2020 թվականի նոյեմբերին Ընկերությունը վերաբրենդավորվել է որպես «Թիմ Տելեկոմ Արմենիա»: Այս ձեռքբերումը նշանավորեց ընկերության համար փոխակերպման մեկնարկը, որի առանցքում են կայուն աճը և տեխնոլոգիական անդադար առաջընթացը:

[1] **FTTH (Fiber to the Home (օպտիկամանրաթելային մալուխի հասանելիություն մինչև շենք)) տեխնոլոգիա.** լայնաշերտ ցանցի կառուցվածք, որտեղ օպտիկամանրաթելային մալուխն անմիջապես անցկացվում է դեպի բնակարան/տուն: **FTTB (Fiber to the Building (օպտիկամանրաթելային մալուխի հասանելիություն մինչև շենք)) տեխնոլոգիա**. օպտիկական մանրաթելային մալուխը տեղադրվում է շենքում, իսկ առանձին միավորների հետ միացումները կատարվում են այլ տեխնոլոգիաների, օրինակ՝ «Ethernet» տեխնոլոգիայի կամ կոաքսիալ (համառանցք) մալուխի միջոցով: **DSL (Digital Subscriber Line (թվային բաժանորդային գիծ))**. այնպիսի տեխնոլոգիաների համակարգ, որոնց միջոցով ինտերնետ հասանելիությունն ապահովվում է ավանդական պղնձե հեռախոսագծերով թվային տվյալների փոխանցմամբ: **VDSL (տվյալների գերարագ փոխանցման թվային բաժանորդային գիծ)**. թվային բաժանորդային գծի տեխնոլոգիա, որն առաջարկում է պղնձե հեռախոսագծերով տվյալների ավելի արագ փոխանցում, քան՝ ADSL տեխնոլոգիայի միջոցով, բայց ավելի կարճ արդյունավետության տիրույթում: **ADSL (Asymmetric Digital Subscriber Line (անհամաչափ թվային բաժանորդային գիծ))**. թվային բաժանորդային գծի տեխնոլոգիայի տեսակ, որն առաջարկում է ներբեռնման ավելի մեծ արագություն, քան պղնձե հեռախոսագծերի միջոցով տրամադրվող ինտերնետի հասանելիության պարագայում արագությունը:

2021 թվականին Տելեկոմ Արմենիան ձեռնամուխ է եղել տարածաշրջանում առաջատար 25 G-PON FTTH ապագա սերնդի ցանցի (NGN) կառուցմանը: Այդ նույն տարվա ընթացքում ընկերությունը մի քանի կարևորագույն թույլտվություններ է ստացել իրավասու կարգավորող մարմնից՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովից. ապրիլին ստացել է ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա, որը վավեր է մինչև 2031 թվականը, իսկ դեկտեմբերին՝ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն: Բացի այդ, «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը սկսել է տվյալների տարանցման ծառայություններ առաջարկել տարածաշրջանում գործող հեռահաղորդակցության օպերատորներին՝ իր DWDM օպտիկամանրաթելային ցանցի միջոցով ապահովելով Ասիայի և Եվրոպայի միջև տվյալների անխափան փոխանցումը:

Հայաստանի թվային ենթակառուցվածքին տրամադրվող աջակցությունը շարունակելու նպատակով 2022 թվականի մայիսին «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը հեղինակավոր միջազգային ֆինանսական հաստատություններից ներգրավել է 45 միլիոն դոլար, այդ թվում՝ քսանական միլիոն դոլար Միջազգային ֆինանսական կորպորացիայից (ՄՖԿ) ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎԶԵԲ) և 5 միլիոն դոլար Ամերիաբանկից: Այդ ֆինանսավորումը խթանեց ընկերության՝ գերարագ ինտերնետի հասանելիությունը մեծացնելու և Հայաստանում թվային տնտեսության կայացմանը նպաստելու հանձնառությունը:

2023 թվականի հունիսին Թիմ Տելեկոմ Արմենիան առաջնային հրապարակային տեղաբաշխման (ԱՀՏ) միջոցով թողարկել է բաժնետոմսեր՝ առաջարկելով հանրությանը մասնակցել ընկերության զարգացման գործընթացին: Հավաքագրված միջոցներն օգտագործվում են Ապագա սերնդի օպտիկամանրաթելային ցանցի (NGN) ընդլայնման, 5G բջջային ցանցի գործարկման և նոր միջազգային ալիքների ակտիվացման համար: 2023թ. նոյեմբերի դրությամբ Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված են եղել ընկերության 40 միլիոն բաժնետոմսերը՝ 8.24 միլիարդ դրամ (20 միլիոն ԱՄՆ դոլար) արժողությամբ, ինչի արդյունքում ներգրավվել են շուրջ 1000 ներդրողներ, և բարձրացվել է կորպորատիվ կառավարման թափանցիկության աստիճանը և արդյունավետությունը:

2023 թվականին ընկերությունը գործարկել է «Team Energy» նորարարական նախագիծը, որը համադրում է հեռահաղորդակցության տեխնոլոգիաները, էներգետիկան և կայուն զարգացումը՝ Հայաստանում էլեկտրական մեքենաների օգտագործումը խթանելու և օդի աղտոտվածության մակարդակն ու տրանսպորտային ծախսերը զգալիորեն նվազեցնելու նպատակով:

2024 թվականի հունվարին ընկերությունը գործարկել է երրորդ միջազգային կապուղին՝ ավելի քան 1 Տբ/վ թողունակությամբ: Այս նոր մալուխը, որը Վրաստանի և Ռուսաստանի միջոցով Հայաստանը կապում է Ֆրանկֆուրտի հետ, ապահովում է Վրաստան-Սոֆիա գործող կապին այլընտրանքային ուղի՝ մեծացնելով միջազգային մակարդակով Հայաստանի տվյալների փոխանակման հնարավորությունները:

Այս ռազմավարական նախաձեռնություններն ընդգծում են Թիմ Տելեկոմ Արմենիայի նվիրվածությունը կայուն զարգացմանը, տեխնոլոգիական նորարարություններին և թափանցիկությանը՝ ընկերությանը դիրքավորելով որպես տարածաշրջանում հեռահաղորդակցության տեխնոլոգիաների առաջատար: Բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխման և ցուցակման միջոցով ապահովվում է Հայաստանի ֆոնդային բորսայի՝ տեղեկատվության հրապարակման պահանջների կատարումը, ինչի արդյունքում բարձրացնում է կայուն զարգացման մասով ընկերության վարկանիշը:

«Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը շատ է կարևորում կառավարման միջազգային չափանիշների ներդրումը՝ տվյալ ոլորտում առաջատար փորձը պահպանելու, արհեստավարժ մոտեցումը և շարունակական կատարելագործումը խթանելու և երկրի ողջ տարածքում իր ֆիքսված և բջջային ցանցերը շարունակաբար արդիականացնելու հանձնառությունը կյանքի կոչելու համար: Հզոր և ճկուն ցանցային ենթակառուցվածքում, ներառյալ՝ սերվերների և ծրագրային ապահովման վերազինման ոլորտում ներդրումներ կատարելու միջոցով մենք ապահովում ենք նորագույն ծառայությունների արագ ներդրումը և մատուցումը:

1.3. Մեր ռազմավարությունը

Թիմ Տելեկոմ Արմենիա ընկերության ռազմավարությունը խարսխված է նորագույն թվային տեխնոլոգիաների միջոցով մարդկային շփումը և աշխատանքն ավելի հասանելի և հարմար դարձնելու առաքելության վրա: Այս առաքելությունից ելնելով՝ մենք ձգտում ենք դառնալ ոլորտի առաջատարը՝ օգտվելով «Թիմ» ընկերության ստեղծագործական ներուժից և տեխնոլոգիաների ընձեռած անսահման հնարավորություններից: Այդ տեսլականը կյանքի կոչելու համար՝ «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը հիմք է ընդունում հետևյալ անկյունաքարային կետերը.

«Թիմ» ընկերության համակցված պրոդուկտների և ծառայությունների էկոհամակարգը

Այժմ մենք կառուցում ենք հզոր և ճկուն ցանց, սերվերային և ծրագրային ապահովման ենթակառուցվածք, որոնք կապահովեն ընթացիկ և ապագա ծառայությունների արագ ներդրումը և բարձրորակ մատուցումը: Մենք պարտավորվում ենք շարունակաբար վերազինել մեր առօրյա աշխատանքում գործածվող կապի ցանցերը և SS համակարգերը: Մեր ռազմավարական հրամայականը ներառում է տարածաշրջանում լավագույն՝ 25 Գբ/վ արագությամբ Ապագա սերնդի օպտիկամանրաթելային ցանցի կառուցումը, որը կնպաստի երկրի ողջ տարածքում մեր ֆիքսված և բջջային ցանցերի ընդլայնմանը և արդիականացմանը: Մեր հեռահար նպատակն է անխափան միացման ցանցում ներառել Հայաստանի ողջ տարածքում բնակվող շուրջ 500,000 տնային տնտեսություն՝ ընդգրկելով նրանց մեր գերժամանակակից

FTTH ցանցում: Այդ ջանքերի շնորհիվ կբարելավենք անհատ բաժանորդներին և բիզնես հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակը՝ դրանով իսկ խթանելով Հայաստանում թվային տնտեսության, առևտրի և ձեռներեցության զարգացումը: Բացի այդ, ինտերնետի հասանելիության ավելի ճկուն և արագ ենթակառուցվածք մշակելու միջոցով «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը կամրապնդի իր դիրքերը հեռահաղորդակցության տեղական և տարածաշրջանային օպերատորներին տվյալների տարանցման ծառայություններ մատուցելու ոլորտում:

2024թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերության 4G բջջային ցանցի ծածկույթն ընդգրկել է Հայաստանի տարածքի 15.35%-ը, բնակավայրերի 21.97%-ը և բնակչության 74.06%-ը: 4G բջջային ցանցի ծածկույթն ընդլայնելու համար՝ ընկերությունը շարունակաբար արդիականացնում է իր ռադիո հասանելիության ցանցը (RAN) և կառուցում է նոր բազային կայաններ: 2023 թվականին 700 ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու նպատակով մրցույթների միջոցով, ընդհանուր առմամբ, 40 ՄՀց հաճախականությունների տիրույթներ ձեռքբերելուց հետո ընկերությունը նախատեսում է Հայաստանի երեք խոշոր քաղաքներում ներդնել 5G ցանցը:

«Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը շարունակաբար բարելավում է թվային հարթակում իր կողմից մատուցվող ծառայությունները՝ նպատակ ունենալով մշակել ծառայությունների փոխկապակցված էկոհամակարգ, որն իր բաժանորդների համար կապահովի լավագույն փորձառություն: Ընկերությունը նախատեսում է դիվերսիֆիկացնել իր եկամուտը՝ ժամանակակից լուծումներով նորարարական ծառայություններ ներդնելու միջոցով: Այդ նպատակն իրագործելու համար՝ 2023 թվականին ընկերությունը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում առաջինը գործարկեց «Team Energy» նորարարական նախագիծը, որը համադրում է հեռահաղորդակցության տեխնոլոգիաները, էներգետիկան և շրջակա միջավայրի պահպանության սկզբունքը: Այս նախագիծը նպաստում է Հայաստանում էլեկտրական մեքենաների օգտագործման գործընթացին, ինչի արդյունքում օդի աղտոտվածության մակարդակը և տրանսպորտային ծախսերը զգալիորեն կնվազեն:

«Թիմ» ընկերության բաժանորդները

Ֆիքսված և բջջային կապի ծառայությունների որակի բարելավմանը և հասանելիության աստիճանի բարձրացմանը զուգահեռ՝ Ընկերությունը նախատեսում է մեծացնել իր բաժանորդների բազան՝ առաջարկելով համակցված ծառայությունների փաթեթներ՝ համադրելով բջջային ծառայությունները ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության (IPTV) և ֆիքսված ձայնային ծառայությունների հետ: Ընկերությունը կարևորում է կոնտակտային բոլոր մակարդակներով, ներառյալ՝ «Թիմ» ընկերության հավելվածների և ծառայությունների օգտատերերին, հաճախորդների համար լավագույն փորձառության ապահովումը, որոնց հետագա բարելավումը նույնպես ներառված է առաջիկա տարիներին կարևոր առաջնահերթությունների շարքում:

Որպես այս նախաձեռնության շրջանակներում մեր արդյունավետության գնահատման ցուցանիշ՝ մենք ուշադիր հետևում ենք Հաճախորդների հավատարմության ինդեքսին (NPS) [2], որը հանդիսանում է հաճախորդների տրամադրվածությունն արտացոլող հիմնական ցուցանիշը: Հաճախորդների գոհունակության մակարդակի գնահատումն ընդգրկում է տարբեր ուղղություններ, այդ թվում՝ ցանցի որակը, գների մասին տեղեկատվության թափանցիկությունը, կոմերցիոն բնույթի առաջարկները, ինչպես նաև՝ զանգերի կենտրոններում և սպասարկման սրահներում սպասարկման որակը և այլն: 2023 թվականին իրականացված Հաճախորդների հավատարմության ինդեքսի հարցման արդյունքներով պարզվել է, որ ի տարբերություն մրցակից ընկերություններում արձանագրված նվազման միտումների՝ Հաճախորդների հավատարմության մեր ինդեքսը ոչ միայն պահպանվել է, այլև աճել է 0.3 տոկոսային կետով՝ նախորդ ժամանակահատվածի համեմատ:

Մեր հաճախորդների փորձի շարունակական բարելավման նպատակով մենք ներդնում ենք նոր համակարգեր և գործընթացներ, որոնց միջոցով զարգանում են ինքնասպասարկման կարողությունները և ապահովվում է մեր ծառայությունների հետ անխափան փոխազդեցությունը: Մեր նպատակն է նորարարական տեխնոլոգիաների և հատուկ անհատականացված լուծումների միջոցով հեշտացնել և հարմարավետ դարձնել մեր հաճախորդների կյանքը:

«Թիմ» ընկերության ծառայությունները

Մեր նպատակն է դառնալ թվային հարթակում ծառայություններ փնտրող հաճախորդների նախընտրելի օպերատորը՝ առաջարկելով հաճախորդների բացառիկ փորձի համար անհրաժեշտ համակցված պրոդուկտների էկոհամակարգ: Այդ նպատակն իրագործելու համար մենք կմշակենք նոր թվային ծառայություններ, որոնք կդիվերսիֆիկացնեն մեր եկամուտների հոսքերը և կհարմարվեն նոր հմտություններ և գիտելիքներ պահանջող աշխատաշուկայի պահանջներին:

Մեր ծառայությունների փաթեթի դիվերսիֆիկացմանն ուղղված առաջին նորարարական քայլով ներկայացրել ենք «Team Energy» բեկումնային նախագիծը, որը համադրում է հեռահաղորդակցությունը, տեխնոլոգիաներն ու բնապահպանական նպատակները: «Team Energy» էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ընդարձակ ցանցն այժմ արդեն ընդգրկում է երկրի ամբողջ տարածքը: Հատուկ հավելվածի միջոցով օգտատերերը կարող են հեշտությամբ գտնել մոտակա լիցքավորման կայանները, լիցքավորել իրենց էլեկտրական մեքենաները և բանկային քարտերի միջոցով

[2] Հաճախորդների հավատարմության ինդեքն արդյունավետության գնահատման ցուցանիշ է, որով արտացոլվում է հավանականության աստիճանը՝ 0-ից 10 սանդղակով, որ հաճախորդն իր ընկերոջը կամ գործընկերոջը խորհուրդ կտա օգտվել Ձեր ընկերության առաջարկած ծառայություններից: Սանդղակի վերին մասում (9,10) գտնվող հաճախորդները կոչվում են խթանողներ, իսկ 0-6 միջակայքում գտնվող հաճախորդները համարվում են քննադատներ: Հաճախորդների հավատարմության ինդեքսը հաշվարկելու համար՝ խթանողների տոկոսից հարկավոր է հանել քննադատների տոկոսը՝ ստանալով -100-ից մինչև 100 միջակայքում ընկած միավոր:

կատարել վճարումը: Ավելին, «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերության բաժանորդները կարող են վճարումները կատարել իրենց հեռախոսահամարի հաշվեկշռից:

«Թիմ» ընկերության կառավարումը

Որպես հեռահաղորդակցության առաջատար ընկերություն՝ մենք գիտակցում ենք արդյունավետ կառավարման և գործառնական արդյունավետության կարևորագույն նշանակությունը մեր շարունակական հաջողության համար: Ուստիև մենք հետևողականորեն փնտրում ենք մեր ընկերության զարգացմանը և ընդլայնմանը նպաստելու համար անհրաժեշտ դրամական միջոցներ ներգրավելու հնարավորություններ: Մեր ընկերության բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումը հաջողությամբ ավարտին հասցնելուց հետո մենք ապացուցել ենք գործելաոճի թափանցիկության և ազնվության սկզբունքները պահպանելու և, առաջին հերթին, մեր հնարավոր ներդրողների և հաճախորդների վստահությունը վաստակելու մեր հանձնառությունը, և այս ամենից ոգեշնչված՝ շարունակում ենք օգտվել կապիտալի շուկայի գործիքներից:

Բացի այդ, մենք օպտիմալացնում ենք ծախսերը մեր գործունեության բոլոր ուղղություններով՝ ենթակառուցվածքի կարողությունների օգտագործումից սկսած ընդհուպ մինչև մատակարարման շղթայի կառավարում՝ նպատակ ունենալով պահպանել որակի, տեղեկատվական անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային ոլորտային ստանդարտները՝ միաժամանակ ապահովելով կայուն ֆինանսական աճ:

Ընկերությունն այս ուղին բռնեց 2023 թվականին, երբ արժանացավ ISO/IEC 27001:2013 ստանդարտի պահանջներին համապատասխանության հավաստագրի, որը տրվել է «CERT International s.r.o.» հավաստագրման մարմնի կողմից իրականացված մանրակրկիտ աուդիտի արդյունքում: Աուդիտը ներառել է ընկերության գլխամասային գրասենյակում և Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր մասնաճյուղերում կատարված գնահատումները և տարբեր ուղղություններով իրականացված ստուգումները, ներառյալ՝ ֆիզիկական և տեղեկատվական անվտանգությանը վերաբերող բոլոր գործընթացների, վերապատրաստման դասընթացների, գնումների և ցանցային անվտանգության կառավարման ստուգումները:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հաստատակամ է առաջիկայում արժանանալ նաև տվյալ ոլորտում ամենաբարձր ստանդարտի պահանջներին համապատասխանության հավաստագրի և շարունակաբար կատարելագործել իր ծառայությունները՝ իր առջև նպատակ դնելով ձեռք բերել նաև ISO 9001:2015 որակի և ISO 14001 բնապահպանական կառավարման համակարգի հավաստագրերը: Այս ուղղությամբ Ընկերության կողմից գործադրված ջանքերը վկայում են ընկերության՝ ռեսուրսների օգտագործման գործընթացն օպտիմալացնելու, էկոլոգիապես մաքուր գործելակերպ որդեգրելու և

անվտանգ աշխատանքային միջավայր ստեղծելու հանձնառության մասին՝ դրանով իսկ ապահովելով բիզնեսի կայուն և շարունակական աճը:

«Թիմ» ընկերության աշխատակիցները

Բարձր տեխնոլոգիաների առաջամարտիկ հանդիսացող մեր ընկերության հաջողության համար էական նշանակություն ունեն համագործակցությունը և արդյունավետ թիմային աշխատանքը: Մենք զարգացնում ենք բազմաֆունկցիոնալ համագործակցության մշակույթը և խրախուսում ենք տարբեր բաժինների աշխատակիցների միջև համագործակցությունը՝ բացահայտելով մեր բազմազան տաղանդների ողջ ներուժը:

Մեր հիմնական առաջնահերթություններից է միջին և բարձր օղակի ղեկավարների առաջնորդական հմտությունների զարգացումը: Մենք գիտակցում ենք ներկայիս արագ փոփոխվող գործարար միջավայրում ճիշտ կողմնորոշվելու համար արդյունավետ առաջնորդության կարևորությունը: Մեր ղեկավար կազմին անհրաժեշտ ունակություններ փոխանցելու համար՝ մենք գործարկել ենք միջին օղակի ղեկավարների զարգացման ծրագիրը (MMDP), որը նպատակ ունի զարգացնել մեր ղեկավարների կառավարման և առաջնորդության հմտությունները, ինչը թույլ կտա նրանց կայացնել իրազեկված որոշումներ, նպաստել կազմակերպության զարգացմանը և ոգեշնչել իրենց թիմերին:

Բազմաֆունկցիոնալ համագործակցությունը խթանելու, ղեկավար պաշտոններում փոխարինելիության կարգի ծրագիրը ներդնելու և առաջնորդի հմտությունները մշակելու մեր հանձնառությունը վկայում է մարդկային կապիտալը զարգացնելու և հեռահաղորդակցության արագ փոփոխվող ոլորտում մշտական հաջողություններ գրանցելու մեր պատրաստակամության մասին:

1.4. Ռազմավարական ներդրումներ

2020 թվականից սկսած ընկերությունն իրականացրել է ներդրումներ ավելի քան 37 միլիարդ դրամի չափով: Այդ ներդրումները հիմնականում ֆինանսավորվել են ընկերության գործառնական դրամական հոսքերից և ընկերության բաժնետոմսերի թողարկումից հավաքագրած դրամական միջոցներից: 2020 թվականից մինչև 2023 թվականն ընկած ժամանակահատվածում ընկերությունը հետևողականորեն իրականացրել է իր ռազմավարության հիմքում ընկած հիմնական ծրագրերը: Արդեն իսկ կատարված, ինչպես նաև միջնաժամկետ կտրվածքով նախատեսվող ներդրումներն ուղղված են հետևյալ նպատակներին.

Ֆիքսված ցանցի արդիականացում և ընդլայնում

Ընկերությունը կառուցել է ինտերնետի հասանելիություն ապահովող գերարագ FTTH (Fiber-to-the-home (օպտիկամանրաթելային մալուխի հասանելիություն մինչև շենք)) ցանցեր Երևանի Դավթաշեն, Արաբկիր, Ավան, Զեյթուն և Նոր Նորք վարչական

շրջաններում, ինչպես նաև՝ մարզային 33 քաղաքներում (ներառյալ՝ Հրազդանում, Կապանում, Արմավիրում, Արտաշատում, Չարենցավանում և այլն) և 5 գյուղերում: Ներկայիս դրությամբ ցանցեր են կառուցվում նաև Երևանի Կենտրոն, Շենգավիթ, Աջափնյակ վարչական շրջաններում և մի քանի մարզային բնակավայրերում:

Տարածաշրջանում կառուցված Ապագա սերնդի եզակի ցանցի շնորհիվ 300,000 տնային տնտեսությանն արդեն հասանելի է 25 Գբ/վ թողունակությամբ գերարագ ինտերնետը: Այս ցանցի համար նախատեսված նորագույն սերվերային և բաժանորդային սարքավորումները մատակարարվում են ոլորտում առաջատար «Նոկիա» ընկերության կողմից:

Ընկերությունը ներկայումս շահագործում է առաջնային օպտիկական ցանց, որը բաղկացած է 6,374 կմ օպտիկամանրաթելային մալուխներից, 2,722 կմ եզակի ստորգետնյա խողովակաշարի ենթակառուցվածքից և 60,000 հենասյուներից, որոնք ընդգրկում են երկրի ամբողջ տարածքը: Ցանցի բոլոր կետերը միացված են համակարգչային ցանցի օղակաձև տեղաբանության սկզբունքով, որն ապահովում է ցանցի առավելագույն հուսալիությունը և ծառայության հասանելիությունը: Ընկերության 886 մակրոկայաններից 729-ը միացված են օպտիկական ալիքներով (ռադիոկապերի փոխարեն), ինչը մեծացնում է բջջային կայանի թողունակությունը և բարելավում է բջջային ինտերնետի որակը:

2024-2026 թվականներին ընկերությունը նախատեսում է ընդլայնել իր գերժամանակակից FTTH ցանցը՝ ընդգրկելով Հայաստանի մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում բնակվող ևս 220,000 տնային տնտեսություն: Մինչև 2026 թվականի տարեվերջ FTTH ծրագրի իրականացման արդյունքում Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում 500,000 տնային տնտեսություն կունենա 25 Գբ/վ թողունակությամբ ապագա սերնդի (NGN) գերարագ ցանցի հասանելիություն: 2024-2026 թվականներին այս մասով նախատեսված ներդրումները կազմում են 7.7 միլիարդ դրամ:

Բաժանորդային սարքավորումների ձեռքբերում

Ընկերությունը շարունակաբար ձեռք է բերում բարձրորակ բաժանորդային սարքավորումներ՝ իր ենթակառուցվածքի միջոցով բաժանորդների բազմազան և աճող կարիքների բավարարումը հուսալիորեն ապահովելու համար: Այս ռազմավարական ներդրումը վկայում է ծառայությունների միացման հետ կապված հաճախորդների բացառիկ փորձի ապահովման նպատակին ընկերության նվիրվածության մասին: Այս կամ այն տարածքում առկա խնդիրներից և մատուցվող ծառայություններից կախված՝ ընտրվում են տարբեր տեսակի սարքավորումներ:

Ընկերության կողմից գործածվող հիմնական բաժանորդային սարքավորումները ներառում են Wi-Fi 4/5/6 տեխնոլոգիայի համար նախատեսված տեղական ցանցը ավելի ընդարձակ ցանցերին միացնող երթուղիչներ, որոնք ապահովում են բարձր արագությամբ

անլար ինտերնետ կապ և ձայնային ծառայություններ: Բաժանորդներին տրամադրվում են նաև Wi-Fi սարքի ազդանշանի ծածկույթի ընդլայնիչներ՝ ցանցի ծածկույթն ընդլայնելու և Wi-Fi սարքերի միջև անխափան անցումն (համակարգչային ցանցի բջջաձև տեղաբանություն) ապահովելու համար՝ զգալիորեն բարելավելով օգտատերերի փորձը: 2024-2026 թվականներին բաժանորդային սարքավորումների համար նախատեսված ներդրումը կազմում է 2.6 միլիարդ դրամ:

Տարանցիկ և ներպետական հաղորդման ցանցի կառուցում

«Հուավեյ» և «Նոկիա» ընկերությունների սարքավորումների հիման վրա կառուցված DWDM փոխանցման ցանցն ապահովում է մինչև 400 Գբ/վ հասնող տվյալների փոխանցման արագություն:

«Հյուսիս-Հարավ» տվյալների տարանցման նախագծում ընդգրկված ընկերությունը 2020 թվականին սկսեց կառուցել և զարգացնել բարձր արագությամբ DWDM փոխանցման ցանց՝ օգտվելով «Նոկիա» ընկերության ժամանակակից տեխնիկական լուծումներից, ինչպես նաև «Հուավեյ» ընկերության սարքավորումների հիման վրա նախկինում կառուցված ցանցից:

Կապի ալիքների թողունակությունը կրկնապատկվել է տարեկան կտրվածքով՝ 2024 թվականի հուլիսին հասնելով 5.4 տբ/վ: Տեղակայված ցանցը լիովին համատեղելի է և ի վիճակի է ապահովել 100G «lambda» ծառայություններ: DWDM ցանցը նաև օժանդակում է IP-MPLS փոխադրման (տրանսպորտային) և SDH ցանցերի աշխատանքին՝ արդյունավետորեն մեծացնելով դրանց թողունակությունը:

Ընկերությունը Հայաստանում գործող միակ օպերատորն է, որն առաջարկում է բարձրորակ ձայնային և տվյալների փոխանցման ծառայություններ իր SDH ցանցում TDM տեխնոլոգիայի կիրառմամբ: Միջկայանային կապի գծերից բացի՝ ընկերությունը TDM տեխնոլոգիայի միջոցով 64 Կբ/վ E3 և STM արագությամբ ծառայություններ է մատուցում Պաշտպանության նախարարությանը (ՊՆ) և Ազգային անվտանգության ծառայությանը (ԱԱԾ): TDM երթուղիների (E1, STM1/4/16/64) շարունակական շահագործումն ապահովելու համար՝ ընկերությունը հին SDH սարքավորումները հետևողականորեն փոխարինում է ավելի նոր, ավելի ճկուն և հզոր սարքավորումներով:

2024-2026 թվականներին Ընկերությունը նախատեսում է շարունակել ցանցի վերազինումը 240 միլիոն դրամ լրացուցիչ ներդրումով:

Գյումրիում, Թալինում և Աշտարակում գտնվող ընկերության տվյալների կենտրոններում արդեն տեղադրվել են նոր հանգույցներ: Նախատեսվում է նոր հանգույց տեղադրել Տաշիրում և մեծացնել Վանաձոր-Պտղավան կապի գծի թողունակությունը՝ միջազգային կապի ուղիների թողունակությունը և հուսալիությունն ամրապնդելու համար: Հրազդանի, Եղեգնաձորի, Կապանի, Ագարակի և Պտղավանի տվյալների

կենտրոնների թողունակությունը մեծացնելու համար լրացուցիչ սարքավորումներ կավելացվեն IP/MPLS ցանցին:

Բջջային ցանցի արդիականացում և ընդլայնում

Ընկերությունը շարունակաբար արդիականացնում է իր բջջային ռադիո հասանելիության ցանցը, որը ներկայիս դրությամբ բաղկացած է 1036 բջջային կայաններից (ներառյալ՝ 886 մակրո, 67 միկրո և 83 պիկո-կայաններ), որոնք ապահովում են բնակչության 98.2 տոկոսին 2G, 96.2 տոկոսին 3G և 74.1 տոկոսին 4G տեխնոլոգիաներով:

2023 թվականին ռադիոհաճախականությունների 700 ՄՀց տիրույթում ընկերությունն աճուրդի միջոցով ձեռք է բերել 40 ՄՀց ռադիոհաճախականությունները, ինչը հնարավորություն է տալիս էլ ավելի ընդլայնել իր 4G ցանցը և առաջիկայում Հայաստանի երեք խոշոր քաղաքների բջջային ցանցերում տեղակայել 5G տեխնոլոգիաները:

Ընկերությունը նախատեսում է ընդլայնել 3G և 4G ծածկույթը երկրի ողջ տարածքում՝ տվյալների ծառայությունների ավելի մեծ հասանելիություն ապահովելու համար: Առաջիկա նախագծերի շրջանակներում կներդրվի VoLTE տեխնոլոգիան: Ցանցի արդիականացման շրջանակներում Երևանում և հանրապետության այլ խոշոր քաղաքներում գտնվող 400 բջջային մակրոկայանները կվերազինվեն 2G/3G/4G/5G տեխնոլոգիաներով աշխատող «Ericsson» ընկերության հաջորդ սերնդի բազմատեխնոլոգիական սարքավորումներով:

2024-2026 թվականներին ընկերությունը նախատեսում է նաև կառուցել շուրջ 250 նոր բջջային կայան Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Տավուշի մարզում և մարզային այլ բնակավայրերում, ինչպես նաև արդիականացնել 250 գործող կայանները՝ 4G տեխնոլոգիաներով աշխատող սարքավորումներով: 5G կայանների տեղակայումը նախատեսվում է սկսել 2025-2026 թվականներին: 2024-2026 թվականներին բջջային ցանցի զարգացման համար նախատեսված ներդրումը կազմում է 7.4 միլիարդ դրամ:

IP մուլտիմեդիա համակարգի զարգացում

Իր բջջային ցանցի ընդլայնմանը զուգահեռ՝ 2021-2023 թվականներին ընկերությունը ներդրել է ինտերնետ տրաֆիկի վերլուծության «EXFO Nova Explorer» հարթակը, որը նախատեսված է բաժանորդների բողոքներին լուծում տալու, ցանցի խնդիրները բացահայտելու և վերլուծելու, խնդիրները պատկերավոր ներկայացնելու և դրանց լուծումը գտնելու համար: «Հուավեյ» ընկերության նախկինում գործող STP/MNP համակարգը փոխարինվեց teleSys USPS համակարգով, և ներդրվեցին նոր SS7 Firewall և DRA գործառութային հնարավորություններ:

Ծառայության շարունակականությունը և հուսալիությունն ապահովելու համար՝ իրականացվել է ներկայումս շահագործվող ցանցի բաղադրատարրերի ընթացիկ տեխնիկական սպասարկում և կատարվել են ծրագրային ապահովման թարմացումներ: Ընկերությունը բջջային տվյալների փոխանցման իր PS Core ցանցն արդիականացնում է «Ericsson» ընկերության ժամանակակից հարթակներով:

Ներկայումս ներդրվող ENM («Ericsson» ընկերության սարքավորումների միջոցով ցանցի կառավարման) համակարգը թույլ կտա այսօր հասանելի ամենաբարձր մակարդակով վերազինել բջջային ձայնային CS Core ցանցի ծրագրակազմը: 2024-2026 թվականներին այս ուղղությամբ նախատեսված ներդրումը կազմում է 2.3 միլիարդ դրամ:

IPTV և OTT հեռուստատեսային ծառայությունների զարգացում

Հեռուստատեսային ծառայությունների որակը բարելավելու նպատակով 2021-2022 թվականներին ընկերությունը ներդրել է ֆրանսիական «ATEME» ընկերության կողմից մշակված նոր TV Headend հարթակը: Հեռուստատեսային պորտալի ծրագրային ապահովումը և դիզայնը թարմացվել են, և շարունակաբար ավելացվում են նոր հեռուստաալիքներ: Համակարգի աշխատանքի արդյունավետությունը և ծառայությունների բարձր որակը պահպանելու համար համակարգում պարբերաբար ներդրվում են լրացուցիչ սերվերային ռեսուրսներ: 2024-2026 թվականներին IPTV և OTT ծառայությունների ուղղությամբ նախատեսված ներդրումը կազմում է 300 միլիոն դրամ:

Տվյալների կենտրոնների և տեխնիկական միջավայրի արդիականացում

Ընկերությունն ունի երկրի ամբողջ տարածքով սփռված ձայնի փոխանցման սարքավորումների ընդարձակ ցանց: Կապի հանգույցները տեղակայված են 91 շենքերում (12 մեծ և 12 փոքր՝ Երևանում, 47-ը՝ մարզային քաղաքներում և 20-ը՝ խոշոր գյուղերում):

Երևանում են գտնվում առաջնային տվյալների երեք կենտրոնները, ընդ որում՝ տվյալների հիմնական կենտրոնում տեղակայված են IP հեռուստատեսության, «ամպային» և SS ենթակառուցվածքը, հիմնական և եզրային երթուղիչներ և առաջնային IP փոխադրման (տրանսպորտային) ցանցի սարքավորումները: Մյուս երկու կենտրոններում գտնվում են բջջային ցանցի համար նախատեսված սերվերային սարքավորումները: Երևանի առաջնային տվյալների կենտրոնը դասակարգվում է որպես տարածաշրջանային 3-րդ մակարդակի տվյալների կենտրոն:

2022 և 2023 միջև ընկած ժամանակահատվածում վերագործարկված SS տվյալների հիմնական կենտրոնն ունի 469 քմ մակերես և օգտագործվում է ընկերության ներքին կարիքների համար՝ միաժամանակ առաջարկելով «ամպային», հոսթինգի և համատեղ տեղակայման ծառայություններ:

Առաջիկա տարիներին անխափան սնուցման սարքերի (UPS) և հովացման համակարգերի արդիականացմանը և բարելավմանը զուգահեռ՝ տվյալների կենտրոններում շարունակաբար կավելացվեն նոր սերվերային պահարաններ: Հուսալիությունը բարելավելու համար կվերակազմավորվեն էլեկտրական հոսանքի մատակարարման ուղղությունները, և կարդիականացվի հակահրդեհային պաշտպանության համակարգը: Նախատեսվում է փոխել մարզային հանգույցների և բջջային կայանների հին մարտկոցները, ինչպես նաև՝ թարմացնել ֆիքսված լարման էներգահամակարգերը և փոխարինել խնդրահարույց պահեստային գեներատորները: 2024-2026 թվականներին այս ոլորտում նախատեսվող ներդրումը կազմում է 1.2 միլիարդ դրամ:

IP/MPLS ցանցի արդիականացում

Ընկերության՝ ամբողջ երկրի տարածքում գործող IP/MPLS մայրուղու (backbone) ցանցը կառուցվել է «Nokia», «Ericsson», «Huawei» և «Cisco» ընկերությունների սարքավորումների հիման վրա, և ցանցի բոլոր կետերը միացված են պահեստային օղակաձև կառույցում, ինչն ապահովում է մալուխի ցանկացած վնասման դեպքում ծառայության լիարժեք հասանելիությունը: Այս ցանցը մայրուղու դերակատարում ունի մի քանի ծառայությունների համար. օրինակ՝ այն տարանցիկ կապուղի է բջջային ցանցի համար, IP փոխադրում՝ կորպորատիվ հաճախորդներին մատուցվող ծառայությունների համար, ագրեգացման կետեր՝ ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին մատուցվող ծառայությունների հասանելիության ցանցերի համար, IP մակարդակի միացումներ՝ միացումների գտնվելու վայրերի (PoPs) և Կենտրոնական գրասենյակների/Տվյալների կենտրոնների միջև:

2024-2025 թվականների ընթացքում նախատեսվում է կատարել ցանցի լայնածավալ վերազինում «Nokia» սարքավորումների միջոցով՝ թողունակության հետ կապված մշտապես աճող պահանջները բավարարելու համար: Այժմ ծրագիրն իրականացման փուլում է:

Վերազինումից հետո ցանցի ընդհանուր թողունակությունը կկազմի մինչև 216 Տբ/վ, ինչի արդյունքում կբարելավվի երթուղային արդյունավետությունը, կապահովվի ցանցի առավելագույն կայունությունը, կկանխվեն ծառայության մատուցման ընդհատումները, ցանցի կառավարումը կլինի ավտոմատացված, և կօպտիմալացվեն ինչպես IP, այնպես էլ օպտիկական ցանցերում առկա ռեսուրսները: Երթուղիչի կառավարման նկատմամբ համապարփակ վերահսկողությունը կմեծացնի IP ցանցի անվտանգությունը՝ միաժամանակ ապահովելով առավելագույն էներգաարդյունավետություն:

Core և Edge IP ցանցի զարգացում

2021-2022 թվականների ընթացքում ընկերությունը գործարկել է նոր, բարձր հզորությամբ եզրային երթուղիչ (Juniper MX 2020) Երևանում, ինչպես նաև միացումների գտնվելու վայրեր (PoPs) Սոֆիայում, Ֆրանկֆուրտում, Մոսկվայում և Ամստերդամում գտնվող միջազգային տվյալների կենտրոններում: Այդ ընթացքում ցանցն ակտիվացրել է նաև նոր կապեր, այդ թվում՝ Ֆրանկֆուրտ-Սոֆիա՝ 100 Գբ/վ թողունակությամբ, Երևան-Սոֆիա՝ 200 Գբ/վ ընդհանուր թողունակությամբ և Երևան-Մոսկվա-Ֆրանկֆուրտ՝ 100 Գբ/վ ընդհանուր թողունակությամբ:

Միջազգային միացումների գտնվելու վայրերում տրաֆիկի փոխանակման նոր ուղիների միջոցով ընկերությունն անմիջական գործընկերություն է հաստատել Ինտերնետ հոսքի փոխանակման հանգույցների (IX) խոշոր ցանցերի հետ, ինչպիսիք են՝ «DE-CIX»-ը Ֆրանկֆուրտում, «DATA-IX»-ը Մոսկվայում, «MSK-IX»-ը Մոսկվայում, «PITER-IX»-ը Մոսկվայում, «BALKAN-IX»-ը Սոֆիայում և «BIX»-ը Սոֆիայում: Նոր միացումների գտնվելու վայրեր են գործարկվել Ֆրանկֆուրտում՝ Equinix/FR5 և Ամստերդամում՝ Equinix/AM5, որոնք փոխկապակցված են:

Ընկերությունը նախատեսում է նոր երթուղի բացել Վրաստանով և Ռուսաստանով դեպի Շվեդիայի Ստոկհոլմ քաղաք և նոր միացումների գտնվելու վայր տեղադրել Ստոկհոլմում՝ «Equinix/SK1»-ում: Բացի այդ, տեղական և միջազգային բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակը բարելավելու համար ընկերության տվյալների կենտրոնում տեղադրվել են Google, Meta, Akamai, Cloudflare, G-Core և Netflix հարթակների համար նախատեսված տվյալների պահոցի գործիքներ (cache engines): 2024-2026 թվականներին այս ոլորտում նախատեսված ներդրումը կազմում է 350 միլիոն դրամ:

SS տեխնոլոգիաների արդիականացում և զարգացում

2023 թվականին ընկերությունը մեկնարկել է վճարային նոր համակարգի ներդրումը, որի շրջանակներում ներառված է նաև ծրագրային լուծումների և սերվերային ենթակառուցվածքի արդիականացումը: Այս լայնածավալ նախաձեռնությունը նպատակ ունի փոխակերպել ընկերության գործունեությունը՝ ներդնելով համակցված ծառայությունների կառավարման նորագույն հնարավորություններ: Նոր համակարգը նախատեսված է մեկ հարթակում մի քանի ծառայությունների կառավարումը պարզեցնելու համար: Այս արդիականացման նպատակն է օպտիմալացնել գործառնությունները, գործընթացները դարձնել ավելի սահուն և, ի վերջո, թեթևացնել թե՛ ընկերության անձնակազմի, և թե՛ հաճախորդների կյանքը:

Նոր համակարգի հիմնական առանձնահատկությունը համակցված ծառայությունների աջակցությունն է, որը հնարավորություն է տալիս մեկ հարթակում օգտվել բազմաթիվ ծառայություններից: Համակցված ծառայությունների գործառութային հնարավորությունն ունի հետևյալ առավելությունները.

- Այն թույլ է տալիս մեկ հարթակում ընդգրկել տարբեր ծառայություններ՝ դրանով իսկ պարզեցնելով բաժանորդների կողմից ծառայություններից օգտվելու և վճարումների հաշվարկը, բարձրացնելով հաճախորդների սպասարկման որակը:
- Բաժանորդներին տրամադրում է միասնական համակարգ, որտեղ նրանք կարող են տեսնել իրենց բոլոր ծառայությունների համար կազմված միասնական հաշիվը և ամեն ինչ կառավարել մեկ ինտերֆեյսից:
- Այն հնարավորություն է տալիս արագ մշակել նոր ճկուն առաջարկներ, օրինակ՝ փաթեթային ծառայություններ:
- Ընդհանուր առմամբ, նոր վճարային համակարգի այս գործառույթը տալիս է ավելի ճկուն և հետաքրքիր ծառայություններ առաջարկելու հնարավորություն, պարզեցնում է վճարումների կառավարումը և հաճախորդների սպասարկումը, նվազեցնում է ծախսերը և մեծացնում է եկամուտը:

Այս ներդրումները վկայում են տեխնոլոգիական առաջընթացի, ենթակառուցվածքների ընդլայնման և ծառայությունների որակի բարելավման մեր հանձնառության մասին: Մենք ձգտում ենք բավարարել մեր հաճախորդների մշտապես աճող կարիքները և պահպանել Հայաստանում հեռահաղորդակցության ծառայությունների առաջատարի դիրքերը:

1.5. Ռազմավարության հիմքում բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքները դնելը

Որպես Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտի առաջատար ընկերություն՝ «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը գիտակցում է մեր համայնքների կայուն ապագան կերտելու գործում իր առանցքային դերակատարումը: Որպես Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում խոշոր գործատու՝ մենք գիտակցում ենք մեզ վստահված պատասխանատվությունը՝ խթանելու կայուն բիզնես գործելաոճը, որը դրական ազդեցություն ունի հասարակության և շրջակա միջավայրի վրա: Մեր ռազմավարական մոտեցման և գործառնական աշխատանքում խորապես արմատավորված է բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) սկզբունքները պահպանելու մեր հանձնառությունը: Այդ սկզբունքների վրա հիմնված լավագույն փորձին մեր նվիրվածությունն ավելին է, քան կանոնակարգերի զուտ պահպանումը և մշակվել է միջազգային չափանիշներին համապատասխան:

Կայուն ապագայի մասին մեր տեսլականից ելնելով՝ մենք բնապահպանական, սոցիալական և կառավարման նկատառումները ներառել ենք մեր ռազմավարական նախաձեռնությունների և կառավարման սկզբունքների առանցքում, որոնք համատեղ կոչվում են Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ: 2022 թվականից ի վեր մենք գործում ենք բնապահպանական, սոցիալական և կառավարման ԲՍԿ միջազգային ստանդարտներին խստիվ հետևելու հաստատակամ հանձնառությամբ՝ միաժամանակ պահպանելով տեղական օրենսդրության պահանջները: Ռազմավարական պլանավորման ընթացքում «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը ոչ միայն ուրվագծել է

հստակ ճանապարհային քարտեզ կորպորատիվ մակարդակում չափելի կայուն նպատակներ սահմանելու համար, այլև ջանասիրաբար իրականացրել է այդ նպատակները 2022 թվականի ընթացքում՝ շոշափելի առաջընթաց ապահովելով կայուն զարգացման մեր նպատակների իրագործման ուղղությամբ: Այդ ճանապարհին Թիմ Տելեկոմ Արմենիան շարունակում է հավատարիմ մնալ բիզնեսի կայուն աճի ապահովման սկզբունքին՝ առաջնորդվելով բնապահպանական, սոցիալական և կառավարման պատասխանատվության չափանիշներով: Մենք ստանձնել ենք դրական ազդեցություն ապահովելու գործառույթը ոչ միայն մեր ընկերության շրջանակներում, այլև այն համայնքներում, որտեղ իրականացնում ենք մեր գործունեությունը, և այն միջավայրում, որտեղ աշխատում և արարում ենք:

1.6. Կայուն զարգացումը «Թիմ» ընկերության շրջանակներում

Կայուն զարգացման իր ճանապարհին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն նշանակալի առաջընթաց է արձանագրել Բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքներն իր գործունեության առանցքում ինտեգրելով: Բնապահպանական, սոցիալական և կառավարման ռիսկերը հայտնաբերելու և կառավարելու պատասխանատվությունը ոչ միայն օպտիմալացնում և արդարացնում է նոր նախագծերում կատարվող ներդրումները, այլև էապես նպաստում է Հայաստանի կայուն զարգացմանը և մեր շահառուների բարեկեցությանը:

Այս համատեքստում 2022 թվականի ընթացքում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հետևողականորեն իր ջանքերն ուղղել է իր ամբողջ գործունեության հետ կապված բնապահպանական, սոցիալական և կառավարման ռիսկերը գնահատելու և այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու գործին, ինչի արդյունքում մշակել է համապարփակ Ռիսկերի գրանցամատյան, որտեղ ներառվել են բնապահպանական, սոցիալական, ինչպես նաև՝ աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության հետ կապված բոլոր ռիսկերը: Ավելին, որևէ նոր ծրագրի մեկնարկից առաջ իրականացվում է համապարփակ ստուգման գործընթաց՝ հնարավոր ռիսկերը բացահայտելու և դրանց ազդեցությունը մեղմելու համար՝ ապահովելով ծրագրի պատասխանատու իրականացումը և հետագա սպասարկումը: Բացի այդ, Ընկերությունը կազմել է իր բիզնես գործառնությունների և գործունեության քարտեզը՝ ՄԱԿ-ի ԿԶՆ-ներին (Կայուն զարգացման նպատակներ) համապատասխան: Ընկերության մակարդակով «Թիմ Տելեկոմ Արմենիա»-ն հաստատակամ ընթանում է ԿԶՆ 7-ի (բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիության ապահովում), ԿԶՆ 9-ի (արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածք), ԿԶՆ 12-րդի (պատասխանատու սպառում և արտադրություն) և ԿԶՆ 13-ի (գործողություն՝ ի նպաստ կլիմայի) իրագործման ուղղությամբ:

N	ՈՒՂՂԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	ԱՆՈՒՂՂԱԿԻ (ՕԺԱՆԴԱԿ) ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ
1		
2		
3		
4		

Նկար 1. Ընկերության պորտֆելի բաշխում՝ ըստ Կայուն Զարգացման Նպատակների

«Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը հանձնառու է նվազագույնի հասցնել իր գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը և նախատեսում է նպաստել Հայաստանի անցմանը ավելի կայուն և ցածր ածխածնային սպառման: Հեռահաղորդակցության ոլորտի ընկերության համար կլիմայի փոփոխության դեմ պայքարում առաջին քայլը իր գործունեության արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների չափումներն են: 2-րդ աղյուսակում ներկայացված են 2023 թվականի ընթացքում Ընկերության՝ Շրջանակ 1, 2 և 3-ում դասակարգված ՋԳ արտանետումները:

Աղյուսակ 2. «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերության արտանետումները և թիրախային ցուցանիշները

ՀԿՑ	Շրջանակ 1 և Շրջանակ 2	Շրջանակ 3
Ելակետային (2023թ.)	**19,559.1 տոննա ածխաթթու գազին համարժեք**	**15,880.2 տոննա ածխաթթու գազին համարժեք**

Թիրախային (1 նոյեմբերի 2029թ.)	-40 տոկոս	**11,735.4 տոննա ածխաթթու գազին համարժեք**	-40 տոկոս	**9,528.1 տոննա ածխաթթու գազին համարժեք**

Ընկերության մակարդակով մշակվել են արտանետումների նվազեցման ճանապարհային քարտեզներ, և սահմանվել են միջանկյալ նպատակներ՝ մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը 1-ին և 2-րդ Շրջանակներում արտանետումների ընդհանուր ծավալը ելակետային տարվա՝ 2023 թվականի ցուցանիշների համեմատ 40 տոկոսով, իսկ 3-րդ Շրջանակում (1-ին կատեգորիա. գնված ապրանքներից և ծառայություններից արտանետումներ) արտանետումների ծավալը՝ մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը 40 տոկոսով նվազեցնելու հանձնառությունը կատարելու համար:

1.6.1. Կայուն զարգացման սկզբունքով կառավարում

Մեր գործունեության սկզբունքները ու կառավարման գործելակերպը շարունակաբար բարելավելու միջոցով մենք ամրապնդում ենք պատասխանատու գործելակերպին և կայուն աճին մեր հանձնառությունը: Մեր կառավարման համակարգի հիմքում տնօրենների խորհուրդն է, որը ներառում է հարուստ փորձ, ստեղծարար գաղափարներ ու տեսակետներ ունեցող ոլորտի մասնագետներ: Խորհրդի պատասխանատվությունն է վերահսկել ամբողջ կազմակերպության մակարդակով ներդրված կառավարման համակարգի իրականացումը՝ ապահովելով մեր գործունեության համապատասխանությունը բիզնեսի բարձրագույն բարոյական և իրավական չափանիշներին: Ընկերության Վարվելակերպի կանոնակարգի և Կոմպլայենսի դրույթների հետ մեկտեղ, որոնք սահմանում են մեր կազմակերպության բոլոր աշխատակիցներից ակնկալվող վարվելակերպի և պահվածքի չափանիշները, «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը հաստատել է բնապահպանական, սոցիալական և կառավարման խնդիրները կարգավորող տարբեր քաղաքականություններ, որոնք նպաստում են մեր առօրյա գործունեության ընթացքում և նոր ծրագրերում բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքների ներառմանը՝ ամուր հենարան ստեղծելով կայուն զարգացման վրա հիմնված արդյունավետ կառավարումն իրականացնելու համար:

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականությունների, օրինակ՝ *Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման պլանին* համապատասխան՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն ոչ միայն հետևում և մշտադիտարկում է բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքների պահպանման առումով իր սեփական տվյալները, այլև ձեռնամուխ է եղել խրախուսելու իր գործընկերներին և շահառուներին պահպանել շրջակա միջավայրի, ինչպես նաև՝ առողջության պահպանման ու անվտանգության և աշխատանքային կանոնակարգերը և հետևել այդ ոլորտում առկա լավագույն փորձին՝ հիմք ընդունելով *Կոմպլայենսի դրույթների, Բիզնես գործընկերների ստուգման քաղաքականության և Վարվելակերպի կանոնակարգի* թարմացված փաստաթղթերը:

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի հիման վրա Ընկերությունն իր ռիսկերի կառավարման գործընթացներում ներառել է միջազգային մակարդակով ճանաչված բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման չափանիշները և պարտավորվել է իր շահառուներին տրամադրել թափանցիկ տեղեկություններ ընկերության բնապահպանական գործունեության վերաբերյալ:

Բացի այդ, Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում Ընկերությունը մշակել է *Մեռական ոտնձգությունների կանխարգելման քաղաքականությունը* և *Հավասար իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման քաղաքականությունը*, որոնք արտացոլում են անօրինական և անարդար հիմքով խտրականությունը վերացնելու, աշխատավայրում ամեն տեսակի ոտնձգություն կանխելու և բազմազանության բոլոր դրսևորումները խթանելու «Թիմ Տելեկոմ Հայաստան» ընկերության հանձնառությունը, ինչպես նաև՝ *Կաշառակերության և կոռուպցիայի կանխարգելման քաղաքականությունը,* որը սահմանում է կաշառակերության և կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված «Թիմ» ընկերության քաղաքականությունը՝ կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր գործող օրենքներին համապատասխան:

Իր շահառուներին այս բոլոր քաղաքականությունների բովանդակությանը ծանոթացնելու և դրանց պահպանումն ապահովելու համար՝ Ընկերությունը գործարկել է նաև *Մտահոգությունների բարձրաձայնման «Speak Up» հարթակ (բողոքարկման մեխանիզմի և չհետապնդելու քաղաքականություն),* որի միջոցով հայտնաբերվում և վերացվում են աշխատավայրում ոչ էթիկական գործելակերպի դրսևորումները՝ դրանց առկայության դեպքում: Ավելին, այս քաղաքականությունը սահմանում է շրջակա միջավայրին հասցված վնասի և ոչ պատշաճ վարքագծի կամ ոչ բարոյական վարքագծի դրսևորումների հետ կապված մտահոգությունների մասին հաղորդելու (այդ թվում՝ անանուն կերպով) գործընթացը:

Ավելին, Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում Ընկերության մշակված ծրագրերը և քաղաքականությունները ներառում են *Շահառուների կառավարման պլանը*, որը նախանշում է տարբեր շահառուների, ներառյալ՝ բաժանորդների, համայնքների, պետական կառավարման մարմինների և շահագրգիռ այլ խմբերի հետ աշխատելու և համագործակցելու ռազմավարությունները՝ ընդգծելով կառուցողական հարաբերություններ ձևավորելու, շահառուների կարիքները և մտահոգությունները հասկանալու և որոշումների կայացման գործընթացներում նրանց կարծիքները հաշվի առնելու կարևորությունը: Այս պլանը նպատակ ունի խթանել կազմակերպության և նրա շահառուների միջև վստահությունը, թափանցիկությունը և փոխադարձ հարգանքը:

Անչափահասների աշխատանքի կանխարգելման քաղաքականությունն արգելում է աշխատանքի ընդունել անչափահաս անձանց և սահմանում է տարիքային համապատասխանությունը ստուգելու մեխանիզմները: Ավելին, այն ներառում է մեր ազդեցության գոտում իրազեկության բարձրացման, ուսուցման և անչափահասներին աշխատանքի ընդունելու գործելակերպի վերացմանն ուղղված նախաձեռնություններին աջակցությունը:

Հարկադիր աշխատանքի բացառման քաղաքականությունն ընդգծում է ամեն տեսակի հարկադիր աշխատանքի գործելակերպի նկատմամբ մեր զրոյական

հանդուրժողականությունը, իսկ *Աշխատավորների միությունների խրախուսման քաղաքականությունը* որպես հիմնարար իրավունքներ է ճանաչում աշխատողների՝ արհմիություններին միանալու և կոլեկտիվ բանակցություններում ներգրավվելու ազատությունը: Այս քաղաքականությունները նախանշում են հարկադիր աշխատանքի դեպքերի բացահայտմանը և վերացմանն ուղղված միջոցները՝ ապահովելով արդար աշխատանքային գործելակերպը և աշխատողների՝ միավորումներ կազմելու և ներկայացուցչության իրավունքների պաշտպանությունը:

Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման քաղաքականությունն արտահայտում է անվտանգ և բոլոր աշխատողների, կապալառուների և այցելուների համար առողջ աշխատանքային միջավայր ապահովելու մեր հանձնառությունը: Այն ներառում է վտանգների վերհանման, ռիսկերի գնահատման, ինչպես նաև դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումները: Ավելին, այն ներառում է կանոնավոր ստուգումների, վերապատրաստման ծրագրերի և արտակարգ իրավիճակների պատրաստվածության հանձնառություններ՝ աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության կանոնակարգերի ու չափանիշների պահպանումն ապահովելու համար:

Համայնքների անվտանգության և առողջության պահպանման քաղաքականությամբ առողջության պահպանումը և անվտանգությունը խթանելու մեր հանձնառությունը տարածվում է աշխատավայրի սահմաններից դուրս՝ ներառելով այն համայնքները, որտեղ մենք իրականացնում ենք մեր աշխատանքային գործունեությունը, ինչպես նաև՝ մեր աշխատակիցներին, ովքեր մեր համայնքի կարևոր մասն են կազմում: Այս քաղաքականությունը ներառում է նախաձեռնություններ, որոնք ուղղված են համայնքի առողջությանը սպառնացող ռիսկերի գնահատմանը և կարգավորմանը, առողջապահական ծառայությունների հասանելիության մեծացմանը և անվտանգության հարցերով իրազեկման ծրագրերի մասով տեղական շահառուների հետ համագործակցության հաստատմանը:

Ճանապարհային երթևեկության և անվտանգության պլանը նպատակ ունի նվազեցնել ինչպես մեր գործունեության շրջանակներում, այնպես էլ մեր գործունեության ազդեցության գոտում գտնվող բոլոր համայնքներում փոխադրումների հետ կապված ռիսկերը: Այն ներառում է ճանապարհային երթևեկության անվտանգության մակարդակի բարձրացման, երթևեկության հոսքի կառավարման և վթարների կամ միջադեպերի հավանականության նվազմանն ուղղված միջոցառումները: Բացի այդ, այս պլանը ներառում է վարորդների համար նախատեսված ուսուցողական, տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցառումներ՝ ճանապարհային երթևեկության պատասխանատու վարքագիծ խթանելու համար:

Եվ վերջապես, *Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման պլանը* նախանշում է արտակարգ իրավիճակներին և ճգնաժամային իրավիճակներին արդյունավետ արձագանքելու ընթացակարգերը և կանոնակարգերը: Այն ներառում է ռիսկերի գնահատում, արտակարգ իրավիճակներին արձագանքման խմբերի կազմում, հաղորդակցման ռազմավարությունների և տարհանման պլանների

մշակում՝ անհատների անվտանգությունն ու բարեկեցությունը և առաջնային գործողությունների շարունակականությունն ապահովելու համար: Բացի այդ, այս պլանում ներառված են ուսումնական վարժանքների և շարունակական բարելավման նախաձեռնությունների վերաբերյալ դրույթներ՝ Ընկերության՝ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման ներքին կարողությունները զարգացնելու համար:

2. Պարտատոմսերի թողարկման հիմնավորումը

«Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը պարտավորվում է իր գործունեության ընթացքում նվազեցնել էներգիայի սպառման և ՋԳ արտանետումների ծավալը (Շրջանակ 1 և Շրջանակ 2), ինչպես նաև նպաստել մեր ողջ արժեշղթայի՝ ինչպես սկզբնական փուլի, այնպես էլ նախագծման և մատակարարման փուլի գործողությունների ընթացքում, արտանետումների ծավալների կրճատմանը (Շրջանակ 3) և խրախուսել մեր մատակարարներին և հաճախորդներին նվազեցնել սեփական արտանետումների ծավալները:

«Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունն առաջնային հրապարակային տեղաբաշխման միջոցով արդեն թողարկել է առաջին արժեթղթերը, ինչի արդյունքում 8 ամսվա ընթացքում ներգրավել է 20 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ: Այդ գործընթացը ներառել է ոչ միայն կորպորատիվ ընկերությունների, այլև «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերության բոլոր շահառուների, ներառյալ՝ աշխատակիցների և բաժանորդների կողմից արժեթղթերի ձեռքբերումները:

Կայուն զարգացման պարտատոմսեր թողարկելով՝ «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը նպատակ ունի.

- խրախուսել իր ընթացիկ գործունեության մեջ բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքների ինտեգրումը.
- բարձրացնել բնապահպանական և սոցիալական կառավարման սկզբունքներով գործելաոճի առավելությունների և կլիմայի հետ կապված ռիսկերի բացահայտմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը.
- ամրապնդել իր դիրքը շուկայում՝ որպես կայուն զարգացման ապահովմանը միտված առաջատար ընկերություն Հայաստանում և
- ծառայել որպես օրինակ ոլորտի այլ ընկերությունների համար՝ դառնալով կայուն զարգացման պարտատոմսերի առաջին թողարկողը Հայաստանի կապիտալի շուկայում:

3. Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը

Գործող համակարգը ներկայացնում է Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման ուղենիշային սկզբունքները: Սույն համակարգը մշակվել է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (ICMA) 2023 թվականի Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներին (SLBP) համապատասխան: Այդ սկզբունքները հավելյալ ուղեցույցներ են, որոնք նկարագրում են ֆինանսական գործիքների միջոցով կայուն զարգացման արդյունքներն ապահովելու, կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման մոտեցումը հստակեցնելու և կայուն զարգացման պարտատոմսերի շուկայի զարգացմանը նպաստելու լավագույն փորձը:[3]

«Տելեկոմ Արմենիա» ընկերության Կայուն զարգացման պարտատոմսերի շրջանակը մշակված է Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքների (SLBP) հինգ բաղադրիչներին համապատասխան՝

(1) Հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) ընտրություն.
(2) Կայուն զարգացման կատարողականի թիրախային ցուցանիշների (ԿԶԿԹՑ) կամ թիրախների սահմանում.
(3) Պարտատոմսերի բնութագրեր.
(4) Հաշվետվությունների ներկայացում.
(5) Վերահսկողություն և ստուգումներ:

Կայուն զարգացման պարտատոմսերը պարտատոմսեր են, որոնք տարբերվում են իրենց ֆինանսական և/կամ կառուցվածքային բնութագրերով՝ կախված այն հանգամանքից, թե արդյո՞ք թողարկողն իրականացրել է նախապես սահմանված կայուն զարգացման/բնապահպանական, սոցիալական և կառավարման նպատակները կամ արդյոք հասել է իր սահմանված թիրախներին: Այս առումով կայուն զարգացման պարտատոմսերի թողարկողը պարտավորվում է որոշակի ժամանակահատվածում բարելավել (ներառյալ՝ պարտատոմսերի հետ կապված փաստաթղթերում) կայուն զարգացման հետ կապված որոշակի արդյունքները, որոնք բնորոշ, հիմնական և էական նշանակություն ունեն իր գործունեության համար: Կայուն զարգացման պարտատոմսերը կատարողականի վրա հիմնված ֆինանսական գործիքներ են, ուստիև՝ եկամուտների օգտագործումը որոշիչ նշանակություն չունի դրանց դասակարգման համար, և նախատեսվում է եկամուտներն օգտագործել ընկերության ընդհանուր բնույթի նպատակների իրագործման համար[4]

3.1. Հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) ընտրություն

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն ընտրել է երկու ՀԿՑ և համապատասխան հավակնոտ ԿԶԿԹՑ-ներ, որոնք երկուսն էլ հիմնական, բնորոշ և էական նշանակություն ունեն իր գործունեության համար: Ընտրված ՀԿՑ-ները ներկայացված են ստորև:

---

[3] Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիա (ICMA) (2020). *Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներ 2020թ.* հասանելի է այստեղ.
[4] Նույն տեղում:

ՀԿՑ 1ա. Շրջանակ 1 և 2 ՋԳ արտանետումներ (tCO2e) բացարձակ թվով	
ՀԿՑ 1ա սահմանում	**<u>Շրջանակ 1.</u>** Ուղղակի արտանետումներ «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությանը պատկանող կամ ընկերության կողմից վերահսկվող աղբյուրներից, չափման միավոր՝ տոննա ածխաթթու գազին համարժեք: **<u>Շրջանակ 2.</u>** Անուղղակի արտանետումներ գնված էլեկտրաէներգիայի, ջեռուցման, գոլորշու և հովացման սպառումից, չափման միավոր՝ տոննա ածխաթթու գազին համարժեք <u>Հաշվարկի մեթոդ.</u> Ջերմոցային գազերի արտանետումների արձանագրության հաշվառման և հաշվետվողականության ստանդարտ («ՋԳԱ արձանագրություն»)
Պատմական տվյալներ	2023թ.՝ **19,559.1 տոննա ածխաթթու գազին համարժեք**
Համատեքստը և էականությունը	Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության Ազգային մակարդակով սահմանված գործողությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը իր ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնել 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ 40%-ով, ինչը վկայում է ի նպաստ կլիմայի գործողության նկատմամբ ազգային մակարդակով մեծ ուշադրության մասին: Բացի այդ, համարվում է, որ թվային տեխնոլոգիաների գործունեության արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների ծավալը, ընդհանուր առմամբ, կազմում է ամբողջ աշխարհում ջերմոցային գազերի արտանետումների 3.5 %-ը (GSMA ասոցիացիա, 2021թ.): GSMA ասոցիացիան հեռահաղորդակցության հատվածի համար սահմանել է ոլորտի առջև դրված նպատակ՝ մինչև 2050 թվականը ՋԳ արտանետումները հասցնել զրոյական մնացորդի, քանի որ GSMA ասոցիացիան այս ՀԿՑ-ն սահմանել է որպես ամբողջ աշխարհի հեռահաղորդակցության օպերատորների համար հատուկ ոլորտային ՀԿՑ: Ավելին, այս ՀԿՑ-ն էական և վերաբերելի նշանակություն ունի «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերության համար, քանի որ այն օգնում է չափել ՋԳ արտանետումների հետ կապված իր սեփական կատարողականը: ՋԳ արտանետումները գնահատվում են եռամսյակային կտրվածքով և այնուհետև համեմատվում են նախորդ տարիներին արձանագրված ցուցանիշների հետ՝ հաշվի առնելով տեխնիկական վերազինման աշխատանքները և ծրագրերի ընդլայնումը: 1-ին և 2-րդ Շրջանակներում դասակարգված արտանետումները

	կազմում են Ընկերության ՋԳ արտանետումների ընդհանուր ծավալի 55%-ը (2023 թվականի տվյալների հիման վրա): Այս ՀԿՑ-ն որոշելու միջոցով Թիմ Տելեկոմ Արմենիան կկարողանա՝ (1) ավելի լավ պատկերացում կազմել իր գործունեության ընթացքում արտանետումների հետ կապված ռիսկերի մասին, (2) աջակցել դեկարբոնացման հետ կապված նպատակների իրագործմանը, (3) ինչպես նաև խթանել վերականգնվող էներգիայի օգտագործումը Հայաստանի տնտեսության տեխնիկական ոլորտում:	
Համապատասխանեցում ԿՁՆ-ներին		7.2 Մինչև 2034 թվականը համաշխարհային էներգետիկ հաշվեկշռում էապես մեծացնել վերականգնվող էներգիայի մասնաբաժինը:
		9.4 Մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը վերազինել ենթակառուցվածքը և վերազինել ձեռնարկությունները՝ դրանք դարձնելու կայուն՝ ռեսուրսների օգտագործման ավելի բարձր արդյունավետությամբ և մաքուր, շրջակա միջավայրի համար անվտանգ տեխնոլոգիաների և գործընթացների առավել լայն ընդունմամբ՝ բոլոր երկրների ձեռնարկած գործողությունների շնորհիվ՝ իրենց համապատասխան հզորությունների համաձայն:
Համապատասխան մեթոդաբանություն և ուղենիշ	Կիրառվող մեթոդաբանությունը տեղին է, և դրա հիման վրա կարող են մշակվել ուղենիշներ: «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերության կողմից կիրառվող արտանետումների չափման մեթոդաբանության հիմքում ընկած է «Greenhouse Gas Protocol: A Corporate Accounting and Reporting Standard («Ջերմոցային գազերի արձանագրություն. կորպորատիվ հաշվառման և հաշվետվողականության ստանդարտ») արձանագրությունը (2016 թվականի վերանայված խմբագրություն): Էլեկտրաէներգիայի փոխակերպման հայաստանյան ամենավերջին գործակիցների մասին տվյալները վերցվել են Միավորված Ազգերի Կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի (UNFCCC)՝ 2021թ. մարտի 1-ի 01.0 տարբերակի Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄԶՄ) հիման վրա: [5]	

[5] https://cdm.unfccc.int/sunsetcms/storage/contents/stored-file-20210303100626127/ASB0038-2021.pdf

	Արտանետումների հավելյալ գործակիցների համար հիմք են հանդիսացել ընդունված համաշխարհային չափանիշները և IPCC, EPA, DoE (ԱՄՆ), Էներգետիկ անվտանգության և արտանետումների զրոյական հաշվեկշռի նախարարության (ՄԹ), Շրջակա միջավայրի, պարենային և գյուղատնտեսության հարցերի նախարարության (ՄԹ) և այլ կազմակերպությունների տվյալների բազաները, ներառյալ՝ կենսացիկլի գնահատման մոտեցումը, որտեղ կիրառելի է:
ՀԿՑ1ա. 1-ին և 2-րդ շրջանակներում դասակարգված ջերմոցային գազերի արտանետումներ (tCO2e) բացարձակ թվով	
	Մեթոդաբանություն • **Տվյալների հավաքագրում**. արտանետումների վերաբերյալ տվյալները հավաքագրվում են ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի ողջ տարածքում գտնվող «Տելեկոմ Արմենիա» ընկերության բոլոր օբյեկտներից, այդ թվում բջջային/բազային կայաններից, վաճառքի և սպասարկման գրասենյակներից (ՎՍԳ), ավտոմատացված հեռախոսակայաններից (ԱՀԿ), գլխամասային գրասենյակներից, պահեստներից և ավտոպարկից: Տվյալները ստացվում են հաշիվ-ապրանքագրերի և տեղադրված սեփական հաշվիչների տվյալների միջոցով: • **Բացառություններ.** այս հաշվարկներում չեն ներառվել ջրի սպառման հետ կապված արտանետումները: «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը չունի արտանետում առաջացնող որևէ համատեղ ձեռնարկություն և օֆշորային ընկերություն, այդ իսկ պատճառով հաշվետվության մեջ որևէ նման ցուցանիշ ներառված չէ: • **Գործառնական հսկողություն**. այլ վարձակալներին վարձակալությամբ տրված շենքերից արտանետումները ներկայացվում են 2-րդ Շրջանակի ներքո, քանի որ այդ շենքերը գտնվում են «Տելեկոմ Արմենիա» ընկերության գործառնական հսկողության տակ: • **ՎՍԳ-ներ**. թեև 78 ՎՍԳ-ներից 61-ը վարձակալված են, «Տելեկոմ Արմենիա» ընկերությունն 2-րդ Շրջանակի ներքո իր հաշվարկներում ներառում է բոլոր 78 ՎՍԳ-ների ՋԳ արտանետումները: Պարագիծը ներառում է վերը թվարկված բոլոր օբյեկտներից արտանետումները՝ առանց համատեղ ձեռնարկությունների կամ օֆշորային տարածքներում արտանետումների: Ելակետային տվյալներում ներառված արտանետումների շրջանակը նույնական է լինելու ԿԶԿԹՑ-ների համար կիրառված արտանետումների շրջանակին:

ՀԿՑ 1բ: Շրջանակ 3 ՋԳ արտանետումներ (tCO2e) բացարձակ թվով	
ՀԿՑ 1բ սահմանում	<u>**Շրջանակ 3.**</u> Մատակարարման շղթայում արձանագրված բոլոր անուղղակի արտանետումները (2-րդ Շրջանակում չներառված), որոնք չափվում են տոննա ածխաթթու գազին համարժեք միավորով, այդ թվում՝ - <u>սկզբնական փուլի գործողությունները,</u> ներառյալ՝ ՋԳ անուղղակի արտանետումները՝ կապված գնված կամ ձեռքբերված ապրանքի և ծառայությունների, վառելիքի և էլեկտրաէներգիայի, վառելանյութի արտադրման և փոխադրման ընթացքում կատարվող արտանետումների հետ, առաջացած թափոնները՝ հաշվի առնելով տվյալ գործունեության ոլորտում թափոնների կառավարման ազդեցությունը. - <u>մշակման ու մատակարարման փուլի գործողությունները,</u> ներառյալ՝ վաճառվող ապրանքի հետ կապված ՋԳ անուղղակի արտանետումները՝ հաշվի առնելով սպառողներին ապրանք վաճառելուց առաջացած արտանետումները:
Պատմական տվյալներ	<u>**2023թ.՝ 15,880.2 տոննա ածխաթթու գազին համարժեք**</u>
Համատեքստը և էականությունը	3-րդ Շրջանակում դասակարգված արտանետումները կազմում են Ընկերության ՋԳ արտանետումների ընդհանուր ծավալի 45% -ը (2023 թվականի տվյալների հիման վրա), իսկ 3-րդ Շրջանակի հիմնական տարրերը հետևյալ ենթակարգերն են՝ ապրանքի և ծառայությունների գնում (3-րդ Շրջանակում դասակարգված արտանետումների 81.6%), վառելանյութի և էլեկտրաէներգիայի հետ կապված գործունեությունից արտանետումներ (16.7%), գործունեության ընթացքում առաջացած թափոններից արտանետումներ՝ (0.7%) և վաճառված ապրանքների օգտագործումից արտանետումներ (1%): ՀԿՑ-ների շարքում 3-րդ Շրջանակում դասակարգված արտանետումների ընդգրկումը համահունչ է միջազգայնորեն ընդունված կայուն զարգացման հայեցակարգերին և ակնկալիքներին, օրինակ՝ «Գիտության վրա հիմնված թիրախների նախաձեռնության» (SBTi/ԳՀԹՆ), «Համաշխարհային հաշվետվողականության նախաձեռնության» (GRI) և «Ածխաթթու գազի արտանետումների մասին

	տեղեկատվության բացահայտման ծրագրի» (CDP) հայեցակարգերին և դրույթներին: Այդ հայեցակարգերում էլ ավելի է կարևորվում 3-րդ Շրջանակում դասակարգված արտանետումների նվազեցման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու խնդիրը՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելու նպատակների վրա դրանց նշանակալի ազդեցությունը: Ավելին, ՀԿՑ-ների շարքում 3-րդ Շրջանակում դասակարգված արտանետումների կրճատումը ներառելով (Կատեգորիա 1. Գնված ապրանքներից և ծառայություններից արտանետումներ)՝ մենք խրախուսում ենք ներքին և արտաքին շահառուներին ներդնել ավելի կայուն գործելակերպ՝ դրանով իսկ նվազեցնելով շրջակա միջավայրի վրա իրենց ազդեցությունը՝ տարածելով այն ուղղակի գործունեության սահմաններից դուրս[6] [7], ինչպես խորհուրդ է տալիս GSMA ասոցիացիան (ESG Metrics for Mobile, 2024 թվականի հունիսին թողարկված ուղեցույց): ՀԿՑ-ն ուղղված կլինի Ընկերության՝ 3-րդ շրջանակի 1-ին կատեգորիայում (Գնված ապրանքներից և ծառայություններից արտանետումներ) ներառված ԶԳ արտանետումների կրճատմանը՝ պետության ստանձնած պարտավորություններին և ոլորտային նպատակներին համապատասխան[8], ինչը կխթանի Հայաստանում թվայնացումը և «կանաչ» տեխնոլոգիաներին անցման հանձնառությունը:	
Համապատասխանեցում ԿԶՆ-ներին		Հրատապ միջոցներ ձեռնարկել կլիմայի փոփոխության և դրա հետևանքների դեմ պայքարելու համար: **13.1.** Բոլոր երկրներում ուժեղացնել դիմակայունությունը և հարմարվողականությունը կլիմայի հետ կապված վտանգների և բնական աղետների նկատմամբ:
		12. Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ

[6] https://www.gsma.com/solutions-and-impact/connectivity-for-good/external-affairs/wp-content/uploads/2024/06/ESG-Metrics-for-Mobile-June-2024.pdf
[7] https://www.gsma.com/solutions-and-impact/connectivity-for-good/external-affairs/wp-content/uploads/2022/12/ESG_The-case-for-operators-and-their-senior-decision-makers.pdf
[8] https://www.gsma.com/solutions-and-impact/connectivity-for-good/external-affairs/wp-content/uploads/2020/02/GSMA_IP_SBT-report_WEB-SINGLE.pdf

Համապատասխան մեթոդաբանություն և ուղենիշ	Կիրառվող մեթոդաբանությունը տեղին է, և դրա հիման վրա կարող են մշակվել ուղենիշներ։ «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերության կողմից կիրառվող արտանետումների չափման մեթոդաբանության հիմքում ընկած է «Greenhouse Gas Protocol: A Corporate Accounting and Reporting Standard» («Ջերմոցային գազերի արձանագրություն. կորպորատիվ հաշվառման և հաշվետվողականության ստանդարտ») արձանագրությունը (2016 թվականի վերանայված խմբագրություն)։ 3-րդ Շրջանակում դասակարգված ենթակարգերի արտանետումները հաշվարկվում են «Գրանթ Թորնթոն» մասնագիտացված ընկերության հայաստանյան և հնդկաստանյան ներկայացուցչական գրասենյակների օգնությամբ։ Գործունեության վերաբերյալ տվյալները հիմնականում դրամական տվյալներ են, որին հաջորդում են ֆիզիկական տվյալները։ Արտանետումների հավելյալ գործակիցների համար հիմք են հանդիսացել ընդունված համաշխարհային չափանիշները և IPCC, EPA, DoE (ԱՄՆ), Էներգետիկ անվտանգության և արտանետումների զրոյական հաշվեկշռի նախարարության (ՄԹ), Շրջակա միջավայրի, պարենային և գյուղատնտեսության հարցերի նախարարության (ՄԹ) և այլ կազմակերպությունների տվյալների բազաները, ներառյալ՝ կենսացիկլի գնահատման մոտեցումը, որտեղ կիրառելի է։

3.2. Կայուն զարգացման կատարողականի թիրախային ցուցանիշների (ԿԶԿԹՑ) կամ թիրախների սահմանում

Ստորև ներկայացված են Ընկերության կողմից սահմանված համապատասխան թիրախները։

Աղյուսակ 3. 1ա ԿԶԿԹՑ. մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը նվազեցնել 1-ին և 2-րդ Շրջանակներում դասակարգված ՋԳ արտանետումների բացարձակ ծավալը 40 %-ով

Թիրախ 1ա . մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը նվազեցնել 1-ին և 2-րդ Շրջանակներում դասակարգված ՋԳ արտանետումների բացարձակ ծավալը 40 %-ով՝ 2023 թվականի ելակետային ցուցանիշների համեմատ	
Թիրախ 1ա	Մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը նվազեցնել 1-ին և 2-րդ Շրջանակներում դասակարգված ՋԳ արտանետումների բացարձակ ծավալը 40%-ով՝ 2023 թվականի ելակետային ցուցանիշների համեմատ
Թիրախի ստուգման ամսաթիվ	1 նոյեմբերի 2029թ.

Ելակետ	19,559.1 տոննա ածխաթթու գազին համարժե [9] 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ 2023 թվականն ընտրվել է որպես ելակետային տարի երկու հիմնական պատճառով՝ 1. 2023 թվականն ընտրվել է որպես ելակետային տարի, քանի որ այն ներկայացնում է ամենավերջին ամբողջական օրացուցային տարին, որի վերաբերյալ հասանելի են համապարփակ և ճշգրիտ տվյալներ։ 2. 2023 թվականից սկսած՝ Ընկերությունն ավարտին է հասցրել իր բոլոր բնապահպանական և սոցիալական ծրագրերի և ընթացակարգերի մշակումը, և սկսել է դրանց իրականացումը, ներառյալ՝ ջերմոցային գազերի արտանետումների գույքագրումն ու դրանց հաշվարկները։ 3. 2023 թվականի ցուցանիշներով արտացոլված է Ընկերության ներքին տնտեսական գործունեության կարգավորումը՝ 2020-2021 թվականներին COVID-19 համավարակի հետևանքով ստեղծված պայմանների համեմատ, և այն եղել է համեմատաբար խաղաղ տարի հայ-ադրբեջանական սահմանին ռազմական միջադեպերի առումով։
Մտադրություն	Ընկերության՝ մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը 1-ին և 2-րդ Շրջանակներում դասակարգված արտանետումների ծավալը 40%-ով նվազեցնելու սահմանած թիրախը լիովին համապատասխանում է կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի ազգային նպատակներին, որոնք ուղղված են մինչև 2030 թվականը արտանետումների ծավալը 40%-ով կրճատելու երկրի ստանձնած պարտավորության կատարմանը։ Այդ նպատակը համապատասխանում է նաև GSMA ասոցիացիայի ուշադրության կենտրոնում գտնվող էներգաարդյունավետության բարելավմանը և հեռահաղորդակցության ոլորտում արտանետումների ծավալների նվազեցման ցուցանիշին։
Գործողությունների ծրագիր	Այս նպատակն իրագործելու համար «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը նախատեսում է՝ 1. Ներդնել էներգաարդյունավետ սարքավորումներ SS և ցանցերի համար. 2. Շահագործումից հանել հին տեխնոլոգիաները (օրինակ՝ պղնձե մալուխները փոխարինել օպտիկամանրաթելայիններով, որոնք ավելի էներգաարդյունավետ են, վարչական մասում բոլոր լամպերը փոխարինել դիոդային (LED) լամպերով). 3. Կրճատել և էլեկտրիֆիկացնել տրանսպորտային միջոցների ավտոպարկը, ավելացնել էլեկտրական մեքենաների թիվը՝ բենզինի և դիզվառելիքի սպառումը նվազեցնելու համար. 4. Մեծացնել արևային էներգիայի օգտագործման ծավալները՝

	Ընկերության օբյեկտներում տեղադրելով վերականգնվող էներգիայի ապահովման կայաններ կամ էլեկտրաէներգիա ձեռք բերել վերականգնվող էներգիայի աղբյուրներից, օգտվելով շուկայի ազատականացումից (ներառյալ հիդրոէներգիա):
Նպատակների իրագործմանը սպառնացող ռիսկերը	Հիմնական ռիսկերը դասակարգվում են հետևյալ խմբերի՝ **–Մրցակցային առումով անբարենպաստ վիճակ**. այն դեպքում, եթե Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի մրցակիցները ՋԳ կրճատման նմանօրինակ նպատակներ չեն հետապնդում, ընկերությունը կարող է հայտնվել մրցակցային առումով անբարենպաստ վիճակում: Կայուն զարգացման նախաձեռնությունների հետ կապված բարձր գործառնական ծախսերը կարող են ազդեցություն գործել ընկերության գնագոյացման, մրցունակության և շուկայում մասնաբաժնի վրա: – **Ցանցի էլեկտրամատակարարման անկայունություն**, որը պահանջում է գեներատորների օգտագործում՝ ընկերության օբյեկտներն աշխատանքային վիճակում պահելու համար: – **Հայաստանում վերականգնվող էներգիայի մրցունակ շուկայի սահմանափակ զարգացում** – **Ռազմավարության վրա ազդող քաղաքական, օրենսդրական և կարգավորող անբարենպաստ գործոններ**. *Այս ռիսկերի հաղթահարումը պահանջում է համապարփակ մոտեցում, որը ներառում է համագործակցություն բոլոր շահառուների, այդ թվում՝ պետական մարմինների հետ, մանրակրկիտ պլանավորում և ռեսուրսների բաշխում, և կայուն զարգացման արդյունքները շարունակաբար բարելավելու հանձնառություն:*

Աղյուսակ 4. Թիրախ 1բ. մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը նվազեցնել 3-րդ Շրջանակում դասակարգված ՋԳ արտանետումների բացարձակ ծավալը 40%-ով

Թիրախ 1բ. մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը նվազեցնել 3-րդ Շրջանակում դասակարգված ՋԳ արտանետումների բացարձակ ծավալը 40 %-ով	
Թիրախ 1բ	Մինչև 2029թ. նոյեմբերի 1-ը նվազեցնել 3-րդ Շրջանակում դասակարգված ՋԳ արտանետումների բացարձակ ծավալը 40%-ով՝ 2023 թվականի ելակետային ցուցանիշների համեմատ
Թիրախի ստուգման ամսաթիվ	1 նոյեմբերի 2029թ.
Ելակետ	**2023թ.՝ 15,880.1 տոննա ածխաթթու գազին համարժեք՝** 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ (3-րդ շրջանակ)
Մտադրություն	Թիրախը համահունչ է Հայաստանում կայուն տնտեսության համակարգին անցմանը և համապատասխանում է Փարիզյան համաձայնագրին համապատասխան գլոբալ տաքացումը մինչև 2°C

	աստիճանով նվազեցնելու նպատակին[10] և մինչև 2050 թվականը ԵՄ Կանաչ գործարքին համապատասխան՝ կլիմայական տեսանկյունից չեզոք վիճակի հասնելու նպատակին։ [11]
Գործողությունների ծրագիր	Այս նպատակն իրագործելու համար «Տելեկոմ Արմենիա» ընկերությունը նախատեսում է՝ 1. ընկերության շրջանակներում խրախուսել վերանորոգված սարքավորումներից օգտվելը. 2. կրկնօգտագործել շահագործումից հանված ցանցային սարքավորումները դրանք վերազինելով. 3. բաժանորդագրության դադարեցումից հետո վերանորոգել և վերազինել տրամադրած երթուղիչների և WIFI սարքերի առնվազն 50%-ը. 4. Մատակարարների և բիզնես գործընկերների պայմանագրերում ներառել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին դրույթներ և գնումներ կատարել պատասխանատու կերպով՝ առաջնություն տալով այն մատակարարներին, ովքեր հանձնառու են նվազեցնելու սեփական արտանետումները.
Նպատակների իրագործմանը սպառնացող ռիսկերը	Հիմնական ռիսկերը թվարկված են ստորև՝ **Շրջանակ 3.** Մեր գործունեությունը կախված է գլոբալ շուկայում գործող մատակարարների լայն շրջանակից։ Մեր մատակարարման շղթայի խաթարումը կարող է նշանակել, որ մենք ի վիճակի չենք լինի իրագործել մեր ռազմավարական ծրագրերը, ինչը կհանգեցնի 3-րդ շրջանակում դասակարգված արտանետումների ծավալի մեծացմանը։

3.3. Պարտատոմսերի բնութագրեր

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի Կայուն զարգացման պարտատոմսերի ֆինանսական բնութագրերը կարող են տարբերվել՝ կախված այն հանգամանքից, թե արդյո՞ք թիրախների ստուգման ամսաթվի, այն է՝ 2029թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ընտրված ՀԿՑ-ն համապատասխանում է նախապես սահմանված թիրախներին, թե ոչ։ Թիրախներին հասնելու կամ չհասնելու արդյունքները հասանելի կլինեն «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի՝ տարեկան հաշվետվություններում հրապարակման օրը կամ դրանից առաջ, բայց ոչ ուշ, քան թիրախի ստուգման ամսաթվից 180 օրացուցային օրվա ընթացքում:

Ընկերությունը նաև սահմանել է արտանետումների ծավալների կրճատման միջանկյալ նպատակ՝ մինչև 2027թ. հոկտեմբերի 1-ը 20%-ով նվազեցնել 1-ին և 2-րդ Շրջանակի արտանետումների ընդհանուր ծավալը՝ ելակետային տարվա՝ 2023 թվականի համեմատ, և 3-րդ Շրջանակի (Կատեգորիա 1. գնված ապրանք և ծառայություններ) արտանետումները՝ մինչև 2027թ. հոկտեմբերի 1-ը։

[10] ՄԱԿ (2015թ.) Փարիզյան համաձայնագիր։

[11] Եվրոպական Հանձնաժողով (2023թ.). «Եվրոպական Կանաչ գործարք»

Այն դեպքում, եթե նշված ստուգման ամսաթվի դրությամբ Ընկերությունը հասած չլինի նախապես սահմանված թիրախներին, ապա պարտատոմսերի համար վճարման ենթակա արժեկտրոնային տոկոսադրույքը կբարձրացվի 0.25 տոկոսի չափով, կամ կվճարվի համարժեք գումարի չափով հավելավճար: Բացի այդ, 0.25 տոկոսի չափով արժեկտրոնային տոկոսադրույքը կամ համարժեք գումարի չափով հավելավճարը ենթակա են վճարման նաև այն դեպքում, եթե թիրախների կատարողականը հնարավոր չէ ընդունելի եղանակով հաշվարկել կամ ներկայացնել՝ անկախ գնահատող ընկերության կողմից ստուգման հավաստմամբ, կամ եթե «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն չի հրապարակել ստուգման հավաստումը պարտատոմսերի վերջնական պայմաններով սահմանված ժամկետում:

<u>Ելակետային ցուցանիշների վերահաշվարկ</u>

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն ընդունում է, որ հնարավոր իրադարձությունները, օրինակ՝ մեծ ծավալներով գնումները, վաճառքները, միաձուլումները, կարգավորող պայմանների փոփոխությունները կամ արտաքին ստուգողի կողմից կիրառվող մեթոդաբանության փոփոխությունները, անհաղթահարելի ուժի հանգամանքները (ֆորս մաժոր), Ընկերության կողմից տարեկան վերանայումները կարող են էապես ազդել ՀԿՑ-ների հաշվարկի վրա, ինչի հետևանքով կարող է պահանջվել վերահաստատել սահմանած թիրախները և/կամ ճշգրտել ելակետային տվյալները: Նման հանգամանքներում Տելեկոմ Արմենիան կարող է մասնագիտացված անկախ գնահատող ընկերության կողմից կիրառված վերահաշվարկի մեթոդաբանությամբ կատարել ելակետային տվյալների վերահաշվարկ: Ընկերությունը նման ճշգրտումների մասին բոլոր տեղեկությունները կներկայացնի իր տարեկան հաշվետվության մեջ՝ դրանց կից ներկայացնելով նաև մասնագիտացված անկախ գնահատող ընկերության կողմից տրամադրված ստուգման հավաստիացման մասին զեկույցը (ստուգման մասում նշված կարգով):

3.4. Հաշվետվողականություն

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն Կայուն զարգացման պարտատոմսերի վերաբերյալ թարմացված տվյալներն ու անհրաժեշտ տեղեկատվությունը կհրապարակի իր տարեկան հաշվետվության մեջ առանձին բաժնով, որը կներառի հետևյալը.

- թարմացված տեղեկություններ ընտրված ՀԿՑ-ների կատարման, ներառյալ՝ ելակետային տվյալների մասին (ըստ անհրաժեշտության).
- թիրախներին հասնելու վերաբերյալ ստուգման հավաստիացման մասին հաշվետվություն, որտեղ ներկայացվում է թիրախների կատարումը, և պարտատոմսի ֆինանսական և/կամ կառուցվածքային բնութագրերի վրա դրա գործած ազդեցությունը, ինչպես նաև այդ ազդեցության պահպանման ժամկետը.
- ՀԿՑ-ների վերանայման հիմքում ընկած առանցքային գործոնների ներդրման որակական և/կամ քանակական բացատրությունը.

- կայուն զարգացման հիման վրա բարելավված արդյունքների հետ կապված դրական ազդեցությունների պատկերումներ և ինֆոգրաֆիկա.
- ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն, որի միջոցով ներդրողները կարող են վերահսկել սահմանած թիրախների հիմքում ընկած նպատակների կատարումը:

Սահմանված թիրախների իմաստով որոշ հնարավոր իրադարձություններ, ինչպիսիք են՝ ձեռքբերումները կամ օտարումները, ներառյալ՝ մեր վերահսկողության սահմաններից դուրս գտնվող իրադարձությունները, օրինակ՝ կարգավորող պայմանների փոփոխությունները, կարող են էապես ազդել ՀԿՑ-ների հաշվարկի վրա և կարող են պահանջել թիրախների վերասահմանում և/կամ ելակետային տվյալների կամ ՀԿՑ-ների շրջանակի նախնական ճշգրտում: Նման ճշգրտումները կներկայացվեն Ընկերության տարեկան հաշվետվության՝ ՀԿՑ-ների մասին հատվածում:

Հաշվետվությունը Ընկերության վեբ կայքում կհրապարակվի յուրաքանչյուր տարի՝ մինչև պարտատոմսերի մարման ժամկետը, և այն դեպքերում, եթե թիրախների գնահատման ցանկացած ամսաթվի/ժամկետի արդյունքներով առաջանա Կայուն զարգացման պարտատոմսերի ֆինանսական և/կամ կառուցվածքային բնութագրերի հնարավոր ճշգրտման անհրաժեշտություն:

4. Վերահսկողություն և ստուգումներ

4.1.1. Անկախ գնահատողի կարծիք

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն ներգրավել է «Sustainalytics» ընկերությանը՝ Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (ICMA) կողմից սահմանված Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներին շրջանակի համապատասխանության մասին Անկախ գնահատողի կարծիք (ԱԳԿ) ստանալու նպատակով: Անկախ գնահատողի կարծիքը նույնպես հասանելի կլինի մեր կայքում: Շրջանակում էական փոփոխություններ կատարելու, ի թիվս այլոց՝ ժամանակի ընթացքում լրացուցիչ ՀԿՑ (ՀԿՑ-ներ) կամ ԿԶԿԹՑ (թիրախներ) ավելացնելու դեպքում մենք կներկայացնենք դրա վերաբերյալ ևս մեկ անկախ գնահատողի կարծիք կամ արտաքին այլ հավաստիացում:

4.1.2. Տարեկան ստուգում

Յուրաքանչյուր ՀԿՑ-ի մասով սահմանված յուրաքանչյուր թիրախին հասնելու վերաբերյալ մենք կպատվիրենք անկախ և արտաքին ստուգում, որը կիրականացվի համապատասխան փորձ ունեցող մասնագիտացված անկախ գնահատող ընկերության կողմից՝ տարեկան կտրվածքով, մինչև պարտատոմսի մարման ժամկետը, և ցանկացած պարագայում՝ երբ պահանջվում է թիրախների գծով կատարողականի գնահատում, որը կարող է հանգեցնել պարտատոմսերի ֆինանսական և/կամ կառուցվածքային բնութագրերի ճշգրտման, մինչև պարտատոմսերի համար սահմանված վերջին ԿԶԿԹՑ-ի ապահովումը:

Թիրախների իրագործմանն ուղղված կատարողականի ստուգման մասին տեղեկությունները կհրապարակվեն Ընկերության վերկայքի տարեկան հաշվետվությունների համապատասխան բաժնում:

ՀԿՑ-ների, ԿԶԿԹՑ-ների կամ ելակետային տվյալների վերահաշվարկի պարագայում բոլոր նման ճշգրտումներին կից կներկայացվի մասնագիտացված անկախ գնահատող ընկերության կողմից տրված ստուգման հավաստիացման զեկույցը, որը նաև կհրապարակվի Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի տարեկան հաշվետվություններում:

Հապավումներ

ԲԲԸ	բաց բաժնետիրական ընկերություն
ԱՀՏ	առաջնային հրապարակային տեղաբաշխում
ԲՄԿ	Բնապահպանական և սոցիալական կառավարում
ԵՄ	Եվրամիություն
ՋԳ	Ջերմոցային գազեր
ICMA	Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիա
ՀԿՑ-ներ	Հիմնական կատարողական ցուցանիշներ
ԿԶՊ	Կայուն զարգացման պարտատոմսեր
SLBP	Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկման սկզբունքներ
ԱԳԿ	Անկախ գնահատողի կարծիք
ԿԶԿԹՑ-ներ	Կայուն զարգացման կատարողականի թիրախային ցուցանիշներ կամ թիրախներ
ՄԱԿ-ի ԿԶՆ-ներ	ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներ

Պատասխանատվությունից հրաժարում

Սույն փաստաթուղթը նախատեսված է ընդհանուր բնույթի տեղեկություններ տրամադրելու համար: Սույն փաստաթուղթը կարող է պարունակել կամ հղման տեսքով ներառել հրապարակային տեղեկատվություն, որը հատուկ կարգով չի ուսումնասիրվել, հաստատվել կամ ընդունվել «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերության կողմից և, համապատասխանաբար, «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը չի տալիս որևէ բացահայտ կամ ենթադրյալ հավաստիացում կամ երաշխիք և չի ստանձնում որևէ պարտավորություն կամ պատասխանատվություն նման տեղեկատվության հավաստիության, ճշտության, հիմնավորվածության կամ ամբողջականության մասով: Սույն փաստաթուղթը կարող է պարունակել հայտարարություններ ապագա իրադարձությունների և ակնկալիքների մասին, որոնք հեռանկարային հայտարարություններ են: Սույն փաստաթղթում տեղ գտած ոչ մի ապագային միտված մտադրություն, ակնկալիք, գնահատական կամ հեռանկար չպետք է ընդունվի որպես կանխատեսում կամ խոստում և չպետք է ընկալվի որպես նշում, հավաստիացում կամ երաշխիք առ այն, որ այդ ապագային միտված մտադրության, ակնկալիքի, գնահատականի կամ հեռանկարի հիմքում ընկած ենթադրությունները ճիշտ են կամ սպառիչ, կամ, ենթադրությունների պարագայում՝ ամբողջությամբ արտահայտված են փաստաթղթի բովանդակությամբ:

Սույն փաստաթուղթը նախատեսված չէ և չպետք է մեկնաբանվի որպես իրավական, ֆինանսական կամ խորհրդատվական բնույթի փաստաթուղթ: Սույն փաստաթուղթը չի հանդիսանում ազդագիր կամ առաջարկի բնույթ կրող այլ փաստաթուղթ կամ նման փաստաթղթի մաս չի կազմում: Սույն փաստաթուղթը չի հանդիսանում և չպետք է մեկնաբանվի որպես վաճառքի կամ բաժանորդագրության հայտերի ընդունման հրավեր կամ առաջարկ կամ գնման կամ որևէ ծառայություն գնելու կամ բաժանորդագրման առաջարկի միջնորդություն կամ որևէ արժեթղթի հետ կապված առաջարկ կամ ներդրումային գործունեությամբ զբաղվելու մղում:

Սույն փաստաթղթի բովանդակության որևէ մաս չի կարող հիմք հանդիսանալ որևէ պայմանագրի կամ պարտավորության համար, և այն չի հաստատվել արժեթղթերը կարգավորող որևէ մարմնի կողմից: Սույն փաստաթղթի և դրանում պարունակվող տեղեկատվության տարածումը որոշ երկրներում կարող է ենթարկվել իրավական սահմանափակումների: Այն անձինք, ովքեր ձեռք են բերել փաստաթուղթը կամ տեղեկատվությունը, պետք է ծանոթանան այդ սահմանափակումներին և պահպանեն դրանք: Սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը չի ստուգվել անկախ մասնագետի կողմից: Այն անձը, ում հասանելի է դարձել սույն փաստաթուղթը, միանձնյա պատասխանատվություն է կրում սույն փաստաթղթում պարունակվող ցանկացած տեղեկատվության օգտագործման համար, և «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում այդ անձի կողմից սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունից օգտվելու հետևանքով պատճառված ուղղակի, անուղղակի կամ որևէ այլ վնասի համար: